№ 5 (116) XI ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1901

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

II

Այն նշանաւոր պայմանները, որ մենք արդէն մատնացոյց արինք իբր արգելքներ հայ-քրդական մերձեցման, հասկանալի է, որ չեն կարող ներկայ օրերում առանձին հաւատ ներշնչել այդ երկու տարրերի մշտական, սիստեմատիք միացած գործակցութեան մասին: Բարեշրջել քիւրդերի բարբարոս կենցաղը, որ տարբեր է մերինից. շարունակ յաջող կերպով մրցել երկու կառավարութիւնների հետ, որոնք հաւասարապէս թշնամի են քիւրդ-հայկական համերաշխութեան. չէզոքացնել կրօնական ազդեցութիւնները, որոնք քրդերի մէջ համանիշ են ազգայնական հասկացողութեան,—դրանք այնպիսի խոշոր կուլտուրական խնդիրներ են, որոնք կարող են մշակուել անդադար գործող մուրճի տակ, երկար ժամանակի ընթացքում. մինչդեռ հայկական հարցի բնաւորութիւնը, մեր ժողովրդի արդի կացութիւնը, կուի շրջանին յատուկ մեր լարուած տրամադրութիւնները, ընթացիկ կեանքի անյետաձգելի պահանջները՝ մեզ թոյլ չեն տալիս հեռաւոր ապագայի վրայ հիմնել ժամանակակից մեր հոգսերը և գործնական ծրագիրները:

Ահա այդ տեսակէտից՝ քիւրդ-հայկական հակառակութիւնները պայմանաւորող գլխաւոր պատճառների առաջն առնելու հարցը, իբրև արմատական և միևնոյն ժամանակ շատ բարդ գործ, չէ կարող իր ամբողջ ծաւալով զբաղեցնել մեզ: Այժմեական կարևորութիւն ունեցող միակ խնդիրը ուրեմն կը մնայ այն՝ թէ չէ՞ կարելի արդեօք, գոնէ յայտնի չափով, մեղմացնել այդ հիմնական արգելքների վնասաբեր ընաւորութիւնը, կամ ուրիշ խօսքերով՝ չէ՞ կարելի արդեօք նոյնիսկ այժմեան հանգամանքներում գտնել քրդական կեանքում ուրիշ այնպիսի գործօններ, որոնք կարող են, եթէ ոչ օրէցօր զարգացնել քիւրդ-հայկական համերաշխութիւնը ընդհանրապէս, գոնէ տալ մեզ ոևէ հողմասնակի, տեղական, երբեմն վաղանցիկ, երբեմն փոքրիշատէ տևողական, երբեմն աննշան, երբեմն լայն յարաբերութիւններ հաստատելու համար:

Սպէնսէրը իր „Քաղաքական հիմնարկութիւնների զարգացման" մէջ՝ խօսելով „պատերազմասէր հասարակութիւնների տեսակի" վրայ, ասում է, որ նրանց մէջ „շատ ուժեղ է հնազանդելու բնազդը" և ընդհակառակը՝ „անհատական նախաձեռնութիւնը կաշկանդուած է", որ այդպիսի հասարակութիւնների մէջ իշխում է „կրաւորական համաձայնութիւն և սպասողականութեան դրութիւն", որի շնորհիւ հասարակութեան պետը, առաջնորդը հանդիսանում է „գլխաւոր դերակատար կեանքում": Վերածելով այս ընդհանուր ճշմարտութիւնը քրդերին՝ պէտք է տեսնենք, որ նոյն ցեղականը սկզբունքը, որ նրանց մէջ քաղաքակրթական այնքա՛ն յետամնաց դրութեան յատկանիշ է, ունի մեզ հետաքրքրող խնդրի տեսակէտից մի առաւելութիւն, որն արժանի է առանձին ուշադրութեան: Շնորհիւ այդ սկզբունքի՝ քրդերի մէջ հաւոզել, օրինակ, մի ցեղապետի (էլ-աղասի, միր) կամ մի կրօնապետի (շէյխ)—դա միևնոյն է՝ թէ հաւոզել նրա ամբողջ ցեղը, որն իր „կրաւորական համաձայնութեան" մէջ՝ գիտէ միայն հնազանդուել իր իշխանաւորներին և կատարել նրանց կամքը: Քաղաքակրթական աւելի բարձր շրջաններում, իհարկէ, պետերի նշանակութիւնը կեանքում սահմանափակում է, հետզհետէ դադարելով ամբողջ հասարակութիւնների պատմական կեանքը իրենց մէջ անդրադարձնելուց: Բայց այդպէս չէ ստորին զարգացման աստիճանների վրայ, ուր հասարակական յարաբերութիւնները չափազանց պարզ են, ուր չկան բազմաթիւ հիմնարկութիւններ, մարդկային գործունէութեան բազմազան ճիւղեր, գաղափարների անընդհատ մշակում, կեանքի նորանոր հոսանքներ՝ իրենց մշտական փոխադարձ ազդեցութիւններով, ընդհարումներով և էն: Երբ Բաֆֆին իր հերոսներից „Գուշակողին" զետեղում է քրդերի մի նշանաւոր շէյխի մօտ, որը „մի օրւայ մէջ կարող է 10 կամ 20 հազար ձիաւոր դուրս բերել", կամ երբ՝ խօսելով հայերի մասին՝ նա, Ասլանի բերանով, ցաւ է յայտնում, որ հայերը ազնւականութիւն չունեն, թէև ինքը „չէ համակրում ազնւականութեան գաղափարին", — մեզ թւում է, որ նա ինկատի ունի հէնց այդ յետամնաց դրութեան մեր մատնացոյց արած որոշ առաւելութիւնը. հայ ազնւականութիւնը, շնորհիւ իր դիրքի և հեղինակութեան ժողովրդի առաջ, գուցէ կարողանար կապել, համախմբել ու մղել նրան դէպի մեր ազգային ապատագրութեան գործը... մտածում է Բաֆֆին:

Ընդունելով ուրեմն, որ ցեղական սկզբունքը շատ նպաստաւոր պայման է ներկայանում մեզ հետաքրքրող

խնդրում, նայենք այժմ, ո՞րքան հեշտ է կամ կարելի է քիւրդ անհատ-պետերի հետ համերաշխութիւն հաստատելու գործը։

„Քրդերը թշնամաբար են վերաբերում թիւրքերին։ Ամէն բանից երևում է, որ նրանք, ինչպէս և թիւրքերին հպատակ ժողովուրդների մեծ մասը, ձգտում են անջատման և որ նրանք պատրաստ են առաջին յարմար դէպքում ապըստամբուել՝ իրենց նախկին անկախութիւնը ձեռք բերելու համար“, — ասում է Շվայդեր-Լերխէնֆելդը, որի մասին յիշեցինք անցեալ անգամ։

Նոյն երևոյթի մասին վկայում է նաև Բէկլիւն.

„Այս դարի կիսից սկսած՝ մասնաւորապէս ռուսաց վերջին արշաւանքից յետոյ տեղի ունեցած քըրդական ապստամբութիւններից շատերը անշուշտ նպատակ ունէին ձեռք բերել քաղաքական անկախութիւն։ Մինչև անգամ փորձեր եղան հիմնելու մի „Քրդական դաշնակցութիւն“։

Եւ տեղի ունեցած փաստերը հաստատում են այս վկայութիւնները։ Ռէվանդուզի փաշալիքը, Հէյքարի, Բախտանի, Բէղդինանի իշխանութիւնները ընկան ոչ առանց ընդդիմադրութեան տաճիկ կառավարութեան. Բէդէր-խանի ապստամբութիւնը (1846), Եզդանշէրի կռիւները (1854), մի քանի պետերի առաջարկները Կարինի ռուսաց հիւպատոսին՝ ընդդէմ տաճիկ կառավարութեան (1876), Շէյխ-Իբադուլլահի ծրագիրը միևնոյն մտքով (1880)—ահա մի քանիսը այդ փաստերից։

Միևնոյն տրամադրութիւնը պէտք է լինի քրդերի մէջ նաև դէպի ռուսները։ Քիւրդ պետերից շատերն են հասկանում, որ ռուսաց տիրապետութիւնը կորստաբեր է իրենց նիստ ու կացի, իրենց արտօնութիւնների և ցեղական ամբողջ կազմի համար։ Ռուս գնդապետ Կարացովը, որի նկարագրի հետ մենք արդէն ծանօթ ենք, ուղղակի յայտարարում է.

...„1827 թուին, երբ կոմս Պասկևիչը տիրեց Երևանեան խանութեանը, քրդերը հաւատարմութեամբ ծառայում էին Երևանեան սարդարներին և ամէն կերպ օգնում էին նրանց ռուսների դէմ։ Բացի կրօնական պատճառներից՝ նրանց դրդում էր պատերազմել մեր դէմ այն միանգամայն հիմնաւոր համոզմունքը, որ երկրում ռուսների հաստատուելուց յետոյ՝ վերջ կը դնի նրանց վայելեալ ազատութեան, նրանց կամայականութեանը և աւարառութիւններին“։

Մենք ոչ մի կերպ չենք մոռանում իհարկէ, որ՝ չնայելով այս ատելութիւններին դէպի տաճիկ և ռուս կառավարութիւնները, շատ յաճախ քրդերը, շնորհիւ իրենց կեանքում տիրող պայմաններին, սոսկալի գործիք են դառնում իրենց թշնամիների ձեռքում՝ ի վնաս հարևան ժողովուրդների։ Բայց քանի որ անհերքելի են այս տրամադրութիւնները, որոնք անշուշտ նոյնպէս ունին որոշ արմատներ քրդական կեանքում և որոնց արտայայտութիւնը եղաւ, իմիջի այլոց, „համիդիէին“ շատ ցեղերի չմասնակցելը, ինչպէս նաև մինչև վերջին ժամանակներս տեղ-տեղ պահպանուող քրդերի կիսաանկախ դրութիւնը, — մենք կարծում ենք, որ կայ որոշ հող, որի վրայ կարող են մշակուել եթէ ոչ մշտական, գոնէ ժամանակաւոր, եթէ ոչ լայն ծաւալով, գոնէ մասնաւոր համաձայնութիւններ այս կամ այն քիւրդ պետերի հետ։

Եզիդիների ժողովրդական մի երգ այս խօսքերն է պարունակում. „Բորենին խնայում է կեանքը և միայն դիակներ է հանում գերեզմանից, իսկ փաշան երիտասարդների արիւնն է խմում... Անիծուի հզօրը, որ գութ չունի“...

Ո՞վքեր են քրդերի համար այդ „գութ չունեցող հզօրները“—Թիւրքերը, ռուսները թէ՞ հայերը... Անկարելի է, որ քրդերի մէջ չգտնուեն իրենց դրութիւնը բաւականաչափ գիտակցող պետեր, որոնք չկարողանան այս հարցին պատասխանել այն ձևով, որը համապատասխանում է իրենց և մեր փոխադարձ շահերին։

Բայց և մենք հայերս պէտք է ջանանք այդ գիտակցութիւնը նրանց ներշնչել։ Միայն՝ դրա համար մենք չունենք ուրիշ միջոց, քան մեր սեփական ուժերը հրաստացնելու և կենդանի օրինակներով ապացուցանելու, որ մենք ընդունակ ենք պաշտպանել մեր և շատ անգամ նաև մեր հարևանների շահերը։ Կ՚ունենանք այդ ուժը, կ՚ունենանք և քիւրդ դաշնակիցներ։ Հակառակ դէպքում հայերը աւելի ձեռնտու պիտի մնան քրդերի համար իբրև հարստահարութիւնների և թալանի առարկայ, քան իբրև վինակիցներ ընդհանուր թշնամիների դէմ։

ՍԵՐՈԲԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

...„Այսպէս վերջացաւ մեծ հիացում ու մեծ սարսափ ներշնչող Սերոբ-փաշան, ազատութեան ծարաւի, իդէալով տոգորուած, միշտ լաւին ձգտող մի բնաւորութիւն“...
Դ-ր Վ. ԲԷԼԻ

Ոսկէ գագաթը բանձրիկ Նէմրութայ
Վա՛ռ-վա՛ռ կը շողայ մէջ վանայ ծովուն.
Ազիզ անունդ, քաջ Սերոբ-փաշայ,
Արմատով փէլուն մէջ մեր սրտերուն.
Թո՛ղ արարքներուդ արժանի գովքն էլ՝
Խղճուկ գուսանիս անդարձ երգերում
Ջինջ աղբիւրի պէս գլայ, գլգլայ...

Նէմրութայ սարը հազար ակն ունի
Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթայ.
Մենակ Սերոբի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կերթայ—
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարաւ ժողովրդի սրտի մէջ կերթայ...

Նէմրութայ սարը քառասուն ժէռ ունի,
Քառասունի գլխուն մարմար քարափ կայ. —
Էն քարփի վրայ արծիւն է նստեր —

ԱՂԲԻՒՐ-ՍԵՐՈԲ

(ՍԵՐՈԲ ՎԱՐԴԱՆԵԱՆ)

Ժէռերի արքան իր գահի վրայ —
Ու կուրցի մէջ մի սիրտ է բռներ,
Եւ զիլ կը կանչէ, չորս դին ձէն կուտայ
Սարերի արքան ամպերի վրայ...
— „Է՜յ, ականջ արէք, հովե՛ր ու հաւքե՛ր,
Կտրիճ Սերոբի սիրտն է կըտցիս մէջ, —
Սիրտը, որ ձեզնէն բանձրանց կը թռնէր։
Է՜յ, ականջ արէք, սարե՛ր ու ձորե՛ր,
Սերոբ-փաշայի սիրտն է կըտցիս մէջ,
Սիրտը, որ ձեզնէն մեծ էր ու խորն էր։
Սերոբ-Աղբիւրը ազատ Նէմրութից
Աղբիւրի նման վազեց լեռն ի վայր
Ու հեղեղ դառաւ, ահ ու մահ սփռեց,
Զարկեց ու ջարդեց հայու դիւշմնին՝
Քուրդին ու թուրքին հարո՛ւր ու հազա՛ր։
Ա՜խ, քուրդն ու թուրքը վախկոտ են, նամարդ,
Սիրտ չունին կայնել ճակատ առ ճակատ.
Փաշայ, փատիշահ աղուէս են, նամարդ,
Սիրտ չունին կուռել ճակատ առ ճակատ։
Եօթ տարի բոլոր ետևէդ ընկան,
Շուաքդ տեսան, եօթը ծակ մտան.
Վերջն հազար դաւով, հազար խաղերով
Ընկար, քա՜ջ Սերոբ... Ու երբ դուն ընկար,
Ես եկայ, հասայ, սիրտդ հանեցի,
Որ գէշ դիւշմնին փայ-բաժին չըլնի։
„Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում լոյս կուտայ.
Ու քարերում, սև հողերում
Թէկուզ թաղեմ՝ չի մարի, —
Սուրբ վանքանի, աղգի սիրուն
Զուր յաւիտեան չի մարի։
Կտրիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում բոց կուտայ.
Սարի սառուց, ձիւների մէջ
Թէկուզ թաղեմ՝ չի սառի, —
Ժողովրդի ազատ օրայ,
Պատւի սիրուն՝ չի սառի,
Զուր յաւիտեան չի սառի“...

—

Նէմրութայ սարը հազար ակն ունի,
Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթայ.
Մենակ Աղբիւրի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կերթայ —
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարաւ վանքանի սրտի մէջ կերթայ...

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

(ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ)

I

ԱՐԱԲԿԻՐԻ ՇՐՋԱՆ

1900, դեկտեմբեր

Այս տարի յուլիս 18-ին Արաբկիրի Էնէցիկ գիւղը յարձակման մ'ենթարկուեցաւ։ Մօտակայ Ղարափունար գիւղէն Տէլի Հասան, Թահաս օղլու Իսմայիլ, համբաւաւոր չարագործ Սէյիդ Ալի և եղբայրն ու փեսան կը կոխեն գիւղն և հրապարակաւ կը յայտարարեն նոյն գիւղը բնակող մէկ քանի տնոր թիւրքերու դուրս չելնել ու հայոց ալ կըսպառնան թէ աւարի պիտի տան գիւղը։ Մօտակայ բլուրներէն գնդակներ կըսկսին տեղալ գիւղին վրայ, ամէնքն արհաւիրքի կը մատնուին, չարագործներն կը մտնեն գիւղին երևելիներէն Ներսէսեան Պօղոսի տունը և վիրաւորելով զայն՝ տունը թալանի կուտան։ Վիրաւորը գիւղէն դուրս կը հանեն՝ սպաննելու դիտմամբ, բայց անոր աղջիկն Աննա՝ 50 լիրայի մօտ արժէքով ոսկեղէն զարդերը չարագործներուն փրկանք տալով, հազիւ կը յաջողի հայրը ազատել։ Այս շփոթութեան միջոցին՝ գիւղացիներէն երկու եղբարք, երկաթագործ Թորոս և Յարութիւն, օգնութեան կուգեն հասնիլ յարձակում կրողներուն, սակայն Թորոս կըսպաննուի և եղբայրն կը վիրաւորուի։

Ակնայ գայմագամութենէն թէև քննիչ մարմին մը կը ղրկուի, բայց նա բաւական կը սեպէ այս եղեռնագործութիւններն վերագրել Տէրսիմի քրդաց և կը վերադառնայ. իսկ բուն ոճրագործներն կը մնան անպատիժ և գիւղացիք՝ արհաւիրքի մէջ։

Արաբկիրի գայմագամին համար շատ գայթակղական դէպքեր կը պատմուին։ Հայ կիներու ու աղջիկներու պատիւն միշտ վտանգի ներքև է անոր անբարոյականութեան ու բռնութեան երեսէն։ Իրեն սպասաւորող ոստիկանի մը ու անբարոյական կնոջ մը միջոցաւ՝ պարկեշտ կիներ զանազան հնարքներով ձեռք կանցնէ և զանոնք օր մը կամ երկու բանտարկելով իր տան մէջ՝ կը գոհացնէ իր կիրքը։ Նիւթական զրկումներու մէջ՝ բարոյականի այս պաշտօնական յափշտակութիւնն, որու կը հետևին միւս պաշտօնեաներն ալ, զորօրինակ հեռագրական պաշտօնեայ Հաքիր պէյ և պանքայի տնօրէն Սապրի էֆ., կը լեցնէ ժողովրդեան կսկիծի չափը։

Որպէս զի փողոցները ամայի մնան գիշերներն ու այս շահատակութիւններն կարենայ անտես աչքերէ ի գործ դնել, գայմագամը՝ պէլէտիյէի նախագահին հետ միացած, գիշերներն, նոյնիսկ ժամը 1-ին, 2-ին (7-8-ին ըստ եւրոպականի), իրենց խանութէն կամ դրացիի այցելութենէ տուն վերադարձող հայերէն 20-25 ղրշ. տուգանք կառնէ և կամ կը բանտարկէ զանոնք։

Կիներն պէտք կըզգան օրերով իրենց տուներուն մէջ փակուելու, ինչպէս մարդիկ կը փակուին բանտերու մէջ։ Շատեր իրենց ընտանեկան պատիւը փրկելու համար, տուն տեղ թողլով՝ կը գաղթեն։ Գայմագամն ասկէ ալ նիւթապէս կ'օգտուի, և 1-3 ոսկիի կը վաճառէ անցագրերն։

II

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

—

1900, նոյեմբեր

Տիգրանակերտի կուսակալութեան ներքև գտնուած հայ ժողովուրդն 95-ի դէպքերուն անձի և ընչից մեծ կորուստներ ունեցած էր. սակայն այս դէպքերուն յաջորդեցին տեսակ մը հալածանքներ և խստութիւններ, որոնք շատ աւելի դառնացուցին ոգեսպառ ժողովրդեան վիճակն։ Նահանգին կուսակալը, Խալիլ պէյ, ժողովրդեան առջև մեծ համակրութիւն չէր վայելեր, և իրեն դէմ արդէն գանգատներ կային։ Իր դիրքը խախտած զգալով՝ ուզեց զօրացնել զայն և գտաւ միջոցը այն ընդհանրացած դրութեան մէջ, զոր կառավարական պաշ-

տօնեայք ի գործ կը դնեն հայոց նկատմամբ։ Կուսակալն այնպէս սկսաւ ցոյց տալ, որ հայոց մէջ իբր թէ խռովարարներ կան և թէ ինք ճարտարութիւն ունի բզքտելու անոնց շարքերը և պաշտպանելու իսլամութեան շահերը։ Կուսակալն այս կերպով ուզեց ծառայութիւն մը ըրած ձևանալ կառավարութեան և փառք ու պատիւ խլել։

Սկսան խուզարկութիւնք կատարիլ թէ՛ քաղաքին և թէ՛ գիւղերուն մէջ, մուխպիրներու կողմէ տրուած և նոյնիսկ կուսակալին ներշնչմամբ գրուած ստայօդ զեկուցագրերու վրայ։ Սիլվան, Սևերէկ, Զնքուշ, Պղերիկ գիւղերն գլխաւոր թատր կը լինին այսպիսի գործողութեանց, և պարկեշտ ու թշուառ գիւղացիներ, որոնց երևակայութենէն անգամ իրենց բոլոր կեանքին մէջ գոնէ վայրկեան մը չէ անցած ապստամբութեան գաղափարն, խումբ-խումբ կը ձերբակալուին ու կը լեցուին բանտերը։ Ասոնց տուներուն մէջ թէպէտև ոևէ վնասակար թուղթ չգտնուիր, որ փաստ մը ըլլայ այս խուզարկութիւններն արդարացնելու, բայց ամենէն անվնաս թուղթեր, ընտանեկան նամակներ ևն, դիտմամբ սխալ կը թարգմանուին ու պատրուակ կը դառնան ձերբակալեալները իբր յեղափոխական ներկայացնելու և ենթարկելու ամենախիստ պատիժներու։ Եթէ մարդ անգամ մը բանտ նետուի, քաղաքական յանցաւորի անունով, անդատաստան կը մնայ ամիսներով, տարիներով, և եթէ վերջապէս դատաստանի ձևակերպութիւն մ՚ալ կատարուի, այն ալ բանտարկեալները մշտնջենապէս դատապարտելու համար է—որը բերդարգելութեան, որը մշտնջենաւոր բանտարկութեան ևն։ Իսկ եթէ պատահի որ մէկ քանի արձակուղներ լինին, անոնք ալ ֆիզիքապէս ու նիւթապէս կործանած դուրս կելնեն բանտէն։ Այսպէս Սևերէկի Եղիա վարդապետը, քանի մը բանտակիցներով անմեղ հռչակուելով, արձակուեցաւ բանտէն դատարանի վճռով, բայց այս անմեղներն տարիէն աւելի ժամանակ տառապեցան բանտին մէջ, զրկանքներ կրելով։

Տիգրանակերտի բանտին մէջ կան այժմ այս կարգէն 50 բանտարկեալք, որոց մէջ կը գտնուին Զնքուշցի Տէր Կարապետ ծերունի քահանայն, դասատուներ և որ աւելի ցաւալին է դպրոցական 10-12 տարեկան պատանիներ, որոնք չարագործներու մէջ դրուած են և կարելի չէ եղած զանոնք ազատել։ Պատանի մ՚ալ 17 տարեկան բերդարգելութեան դատապարտուած է։

Այս բանտարկութիւնները կառավարութեան ձեռքին կը ծառայեն նաև իսլամ ժողովուրդը հայոց դէմ գրգռելու, որու պատճառաւ հայերը արհաւիրքի ենթակայ կը լինին միշտ։

Բալուի գայմագամն ալ, որ կը գտնուի նոյն կուսակալին իրաւասութեան ներքև, իր կարգին կը հետևի միևնոյն գրութեան։ Ինքն է որ փակած է Բալուի Ս. Աստուածածնայ վանուց մէջ բացուած որբանոցն և դռները կնքելով՝ դուրս հանած է որբերն հետևեալ պարագաներու մէջ։—Բալուի ազդեցիկ անձերէն Քիւչիւկ և Սայիտ պէյեր կուզեն տիրանալ նոյն վանքին սեփական արտերուն և բերքերուն։ Գայմագամը կըստանձնէ գործը և անոնց հետ անձամբ վանք երթալով՝ ամբարանոցին դռները կը խորտակէ, վանքին և որբանոցին ուտեստի ձմրան պաշարը դուրս հանել կուտայ ու կը յանձնէ այս պէյերուն, կը գանակոծէ փոխ-վանահայր Տ. Կարապետ քահանայն և որբանոցի սպասաւորը, որք յանդգնեցին գանգատելու այս բռնութեանց համար, կը ձերբակալէ նոյն սպասաւորը և վանքին մօտակայ Հավավ գիւղի հայերէն մէկ քանին, քաղաք կը տանի կալանաւոր, կառավարական պաշտօնատան մէջ կը ծեծէ և բանտարկել կուտայ զանոնք։ Կը կանչէ նաև Բալուի առաջնորդական տեղապահին փոխանորդը Տէր Սուրէն քահանայն և ըսելով թէ իր արարքները նա ինքն է որ կը տեղեկագրէ առաջնորդին (որ Մէրտին կը գտնուի), ձեռքը ատրճանակին կը տանի և կըսպառնայ սպաննել զինքը, հայհոյելով անոր կրօնքին և մեծերուն։ Թէպէտև Մատէնի միթէսարիֆն կը տեղեկանայ եղելութեան և յատուկ քննիչ մը կը ղրկէ Բալու, բայց գայմագամն բռնական միջոցներ ձեռք կառնէ, և այսպէս սարսափահար ընելով՝ կը յաջողի զամենքը լռեցնելու և քննութիւնը ի դերև հանելու։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 8 յունիս

Մի օր — հաղուագիւտ են այդպիսի գեղեցիկ օրեր— Լեհաստանի մայրաքաղաքի կառավարիչը, իր ստորադրեալների հանդիսաւոր ընդունելութեան միջոցին, շքեղ համազգեստների մէջ ձգուած աստիճանաւորներին այս անսպասելի հարցը ուղղեց.

— Գիտէ՞ք արդեօք տեղական լեզուն...

Ոչ մի շրթունք չշարժուեց։ Եւ „այո“ բառը, այնքա՜ն սովորական ցարի ծառայողների բերանում, այդ անգամ չլսուեց խոնարհ բերաններից։

— Ի՞նչ է պատահել, հարցնում էին միմեանց ռուսական պաշտօնեաները մի քանի օր շարունակ՝ դիւանատան միջանցքներում կամ փողոցում հանդիպելիս։ Պատասխանի փոխարէն ուսեր էին վեր քաշում։ Եւ նրանցից ամենահամարձակները — թէև շատ հազագիւտ — վճռեցին, իհարկէ, իրենց սրտի խորքում միայն, որ „նորին գերազանցութիւնը երևի շուտով պետական խորհրդի անդամ կը նշանակուի. շատ է ծեր“...

Իրաւունք ունէին։ Այդ օրինակ „խելառ“ հարցեր տալու համար ռուսաց պետութեան մէջ կամ պիտի լինել շատ „ջահիլ“—համանիշը՝ անզգուշութեան և ազատամտութեան, և կամ շատ „ծեր“՝ համանիշը թուլութեան կամ տխմարութեան... „Ջահիլ“ թէ „ծեր“ էր Վարշավայի նորեկ կառավարիչը՝ — դա մի հարց է, որ մութ է մնացել...

Մութ չէ միայն այն, որ այդպիսի „ջահիլ“ կամ „ծեր“ երբէք չէ անցել կովկասեան լեռնաշղթան, որովհետև Կազբէկի և Մասիսի ստորոտների դարևոր տարեգրութեան մէջ ոչ ոք չի յիշում—անկարելի է յիշել մի բան, որ տեղի չէ ունեցել—որ երբէք ոևէ պաշտօնեայ, կառավարչապետ թէ նահանգապետ, դատարանի նախագահ թէ փոստային մի կառավարիչ, իր ստորադրեալներին ընդունելիս հարցնէր նրանց. „Գէտէ՞ք արդեօք հայոց կամ վրաց լեզուն“։ Կարող է արդեօք այդպիսի մի հարց տեղ գտնել աստիճանաւորի նեղ գլխում, որը մի բան է ուսել և մի բան միայն գիտէ,

այն՝ որ աշխարհի երեսին մի լեզու միայն կայ, ռուսաց լեզուն—ոչ իհարկէ Կարամզինի կամ Պուշկինի լեզուն, այլ ուրիադնիկի և կնուտի լեզուն, որով ամէնքը պիտի խօսեն. ով գիտի՝ նա կը խօսի. ով չգիտի՝ թող լռի... Եւ ինչո՞ւ խօսել, քանի որ ամենալաւ հպատակը նա է, որ լուռ է և այն էլ՝ միշտ...

Անտեղեակ դատողը կարող է կարծել, որ հարիւր տարւայ ընթացքում ռուսաց լեզուն այնքան տարածուել է և այնքան ժողովրդականացել է կովկասեան ազգերի մէջ, որ կարելի է այդ լեզուով կառավարել դատել, այդ լեզուով օրէնք գործադրել, ցաւեր իմանալ: Երբէ՛ք: Տեղը չէ այստեղ մտնել այդ երևոյթի պատճառների մէջ: Բաւականանանք փաստը արձանագրելով. ամբողջ գաւառների ազգաբնակութիւնը նախկին Վրաստանում կամ Հայկական նախկին նահանգներում— վրացիներ, հայեր, թիւրքեր — դեռ ևս շատ տեղ մի խօսք անգամ չգիտէ այն լեզուից, որով մի դար է հրամայում են... Եւ եթէ մի օր, ուէ պատճառով ապստամբ Կովկասը դէն նետէր ռուսաց միապետութեան լուծը, երեք օրւայ մէջ անհետ կը լինէր դարևոր տիրապետութեան վերջին նշանը և գուցէ ուրիշ ոչինչ չէր մնայ, բայց եթէ զօրանոցների հաստ պատերը և ուղղափառ տաճարների սոխաձև գմբէթները...

Ցնորք էր իհարկէ երևակայել անգամ, թէ երբևիցէ ռուսաց գահի ժառանգը, այն երկար տարիների ընթացքում, երբ նա ամենայն խնամքով մարզութիւններ է անում, թէ ինչպէս պէտք է ձեռք տալ, պագնել կամ պարել, երբ նա ամիսներով վարժւում է գեղեցիկ կերպով իր անունը ստորագրելու „պետական պարտաւորութեան“ մէջ,—ցնորք է, ասում ենք, երևակայել, որ նա մտածէր մի քանի ժամ գոնէ նւիրելու լեհական կամ հայոց լեզուի ուսումնասիրութեան, եթէ ոչ իբրև արքայական պարտաւորութիւն—արքաները պարտաւորութիւն չեն ճանաչում—գէթ իբրև յարգանք դէպի այն հպատակ ազգութիւնները, որոնք խօսում են այդ լեզուներով... Ներկայ օրերում ցնորք է և այն գուցէ, որ մինիստրի վրայ պարտք դրւէր ծանօթ լինելու պետութեան կազմի մէջ մտնող գլխաւոր ազգութիւնների լեզուներին, հարկաւոր դէպքում նրանց դարդերը անմիջապէս լսելու համար: Բայց միթէ՞ ցնորք պիտի մնայ և այն տարրական միտքը, որ Կովկաս եկող պաշտօնեան, եթէ ոչ մի փոխարքայ կամ կառավարչապետ, որ իր պալատից հազիւ է ոտքը դուրս դնում, գոնէ նահանգապետը, գաւառի կառավարիչը, դատաւորը, ոստիկանապետը, որոնց պարտաւորութիւնը ամէն օր նրանց կանգնեցնում է երես առ երես երկրի ժողովրդի հետ, իմանային այդ ժողովրդի լեզուն, որին ուղարկւած են կառավարելու, չենք ասում ծառայելու, որովհետև Ռուսաստանում պաշտօնեան չէ, որ ծառայում է ժողովրդին, այլ ժողովուրդը պաշտօնեային: Սակայն այդ տարրական կարծիքն մնաց և մնում է ցնորքների շրջանում, և այն էլ՝ վտանգաւոր ցնորքների: Եւ ի՞նչ բիւրաւոր չարիքներ չծնուեցին այդ դժբախտ կացութիւնից:

Ահա դատարանումն ենք:

Դահլիճի մէջ, միջանցքներում խռնւած է ժողովուրդը. — լեռնական վրացիներ, գիւղերից եկած հայեր, սարերից իջած թիւրքեր: Գլխափաթաթ կանայք, սպիտակահեր ծերունիներ՝ նահապետական միամտութիւնը երեսներին, մատաղ երեխաներ՝ երկչոտ, անհանգիստ հայեացքներով: Ամէնքն էլ կուչ են եկել: Դողը բոլորի սրտումն է: Սպասում են ժամեր, օրեր: Նրանց մի սենեակից միւսն են քշում, մի միջանցքից մի այլը: Տւած հարցերին ոչ ոք չի պատասխանում: Նրանց ոչ ոք չի ուզում հասկանալ: Ահա և դատաւորները՝ կամ քնաթաթախ աչքերով, ամբողջ գիշերւայ թղթախաղից, կամ կատաղի՝ ինչպէս տանջւած գայլը, ո՞վ գիտէ, ընտանեկան ինչ դրամայից... Հարւած են խեղճերը իրենց դատաւորների առաջ: Մահւան և կեանքի խնդիր է: Սակայն նրանք մի բան անգամ չեն հասկանում: Տգէտ, անուս թարգմանը թարգմանում է, ինչպէս և ինչ կամենում է: Եւ ահա մի ժամից յայտարարում են՝ „Բոլորն էլ ճանաչւած են մեղաւոր—աքսոր Սիբիր“: Վճիռը նոյնպէս պէտք է թարգմանել: Եւ դեռ թարգմանութիւնը չարած, դևերի նման բուսնում են զինւորները, քշում են անիսս, անլեզու մեղադրւածներին, ինչպէս անասուններ: Ո՞ւր — նրանք էլ չգիտեն... Եւ ինչո՞ւ համար: „Իշխանութեանը դիմադրութիւն ցոյց տալու համար“ — ասում է թարգմանը: Դիմադրութիւն իշխանութեա՞ն: Ո՞ւր. ե՞րբ...

Ահա գիւղումն ենք:

Շինականները դողի մէջ են. փողոցներից մարդիկ փախուստ են տալիս, կարծես մտալուտ փոթորկից. միայն տանուտէրն է երևում, գունատ շշկլւած, նշանը վզին: — Ի՞նչ է պատահել: Սպասում են գաւառապետին: Ահա և նա, գաւառի ցարը: Կէս ժամից՝ „հարայ-հրոցը“ գիւղն է տիրել: Տեսարանը թիւրք փաշաների գալուստն է յիշեցնում: Եասաուլները կազակների հետ գիւղն ընկած՝ հաւեր են հաւաքում, իւղ են պահանջում, լաւ գինի են որոնում... Եւ եթէ ձրի չեն տալիս, կամ քիչ են տալիս, մտրակը պատրաստ է: Ծեծ, հայհոյանք, կռիւ: Տանուտէրը փորձում է գանգատւել: Գաւառապետը չհասկանալու է դնում: Ահա յանկարծ մի սրտակոտոր ճիչ. պառաւ գեղջկուհին, կատաղութիւնը դէմքին, հրացայտ աչքերով, դէպի մեծաւորն է վազում: Գանգատ ունի, — եասաուլները նրա հարսի պատիւն են վերաւորել: Նա գոչում է, նա շանթեր է արձակում...

— Հաւերս էլ, կովս էլ, սաղ տունս էլ թող տանեն, թագաւորին զուրբան, բայց հարսիս հետ ի՞նչ գործ ունեն այդ անհաւատ, գետին մտածները. Աստծու կրակը դրանց գլխին...

— Ի՞նչ է ասում, որոտաց սենեակից գաւառապետը:

— Հաւի փող է ուզում, բացատրում է խորամանկ թարգմանը...

„Մեծահոգի“ գաւառապետը քսան կոպէկ շպրտեց խեղճ գանգատաւորի առաջ գոչելով.

— „Լռեցէ՛ք“: Եւ մտրակները լռեցին բողոքողին: Վիրաւոր կինը յետ մղւեց, արիւնոտ, կապտած մարմնով: Մտրակը խաղաղացրեց վրդովւած, բողոքող հոգին...

Կառավարչապետի պտոյտն է:

Գաւառները տակն ու վրայ են. նահանգապետը քուն չունի. գաւառապետները ոտքի վրայ: Որտեղով պիտի անցնի — ոչ ոք չգիտէ: Կամուրջները նորոգում, ճանապարհները կարգի են բերում: Ահա և նա, գաւառական փոքրիկ քաղաքում: Ծերունի է, գլուխը արդէն ճաղատ, կորացած, յենւած իր ձեռնափայտի վրայ: Կանգնած հրապարակի վրայ, շրջապատւած նահանգի բոլոր մեծերով, ժողովրդի ցաւն ու դարդը, գանգատը ուտենչն է ուզում իմանալ: Ամբոխը լարւած է... Լսում են յուզւած ձայներ, բացականչութիւններ.

— Չենք ուզում. մեր նաչալնիկը (գաւառապետը) մեր տունը քանդեց, չենք ուզում. կաշառք տալով մեր հոգին ելաւ. չենք ուզում. . .

— Ի՞նչ են ասում։

Գաւառապետը առաջ եկաւ, նայեց թարգմանին, աչքերը գցեց նահանգապետի աչքերին և պատւի կանգնելով կառավարչապետի առաջ, հանդիսաւոր կերպով արտասանեց.

— Ձերդ պայծառափայլութիւն. ասում են, որ դպրոց չենք ուզում, փող չունենք, ծախքը չենք կարող հոգալ. .

— Ի՞նչպէս, դպրոց չե՞ն ուզում. Ես հրամայում եմ։ Մինչև վեց ամիս շինութիւնը պատրաստ պիտի լինի։ Յայտարարեցէք. — ասաց, նստեց կառքը, ճեղքեց ամբոխը և սլացաւ հեռու։ Ու Թիֆլիս դարձած, նա շտապեցրեց դէպի Պետերբուրգ իր զեկուցումը, որ վերջանում էր այս խօսքերով. „Անձամբ և տեղնուտեղը ուսումնասիրելով ազգաբնակութեան կարիքները. . . ևն“։

Զինուորակոչ է։

Գիւղի ահագին հրապարակի վրայ ծովացած է ամբոխը։ Մէջտեղը, մի պատւանդանի վրայ, կանգնած է գաւառապետը։ Զինուորագրութեան սկիզբի տարին է, և նա, յանուն „արդար օրէնքի“, բացատրում է ժողովրդին՝ թէ ինչպէս պէտք է վիճակ հանել և ով է զինուոր գնում։ Ժողովուրդը ալեկոծած է. անվստահութիւնը թափանցել է մինչև նրա հոգու խորքը։ Նա չի հաւատում. նա կասկածներ է տանում։ Եկեղեցու բակում, ջրի ճանապարհին առասպելներ են պատմում։ Եւ ինչո՞ւ չպատմեն. նոր օրէնքը ոչ ոք չի ուզում բացատրել, ոչ ոք լուրերի առաջը չի ուզում առնել։

— Ահա այսպէս—կրկնում է գաւառապետը ամբոխին—ամէն մէկը ձեռքը կը կոխի այս արկղի մէջ և կը հանի մի տպած համար (պէչատնի նոմէր)։

— Աղան ասում է որ — թարգմանում է թարգմանը — ամէն մարդ ձեռքը կը տանի և կը հանի փէչատած թուղթը *)։

— Ո՞ւր է, ո՞ւր փէչատած թուղթը—գոռում՝ են մի քանի կողմից,—փէչատած չի, խարում էք. բաց է։

Գաւառապետը՝ չ հասկացած յուզման պատճառը, զայրոյթի նշաններ է ցոյց տալիս։ Զայրոյթը աւելի է յուզում ամբոխը, և թիւրիմացութիւնը վերջանում է. . . մտրակահարութեամբ։

„Լեզւաբանական տանջանքները“, —դա մի ոճ է՝ յատուկ միայն Կովկասին—հետևում են տեղական ազգաբնակութեան և այդ հիմնարկութիւններից դուրս, առօրեայ կեանքի ամէն մի քայլի վրայ։ Գիւղացի մի հայ նամակ ունի ուղարկելու իր որդուն, որ Բագու է. նա իրաւունք չունի հայերէն գրել. պիտի թողնի գործը, մի օրւայ ճանապարհ անցնի, քաղաք գայ, դիմի մի ծանօթի կամ անծանօթի, աղերսի, որ նրա նամակի հասցէն ռուսերէն գրեն։ Մի հասցէի համար՝ մի ամբողջ օրւայ կորուստ. . .

— Պառաւ, որդու կարօտ մայրը բանտ է եկել տեսնելու որդուն։ Նրա սիրտը տապակւում է, նա առաջ է վազում, որ մի խօսք ասի, մի խօսք լսի զաւակից։ Բայց ռուս պահապանի կոշտ ձեռքը նրան յետ է հրում. „ռուսերէն խօսեցէք“։ Եւ խեղճ մայր ու որդին ստիպուած են աչքերով խօսել, լռութեան մէջ որոնել իրենց կարօտը, յոյզերը. . . — Գիմնազիայում երեխան հարց ու փորձի է կանչուած. տեսուչը սպառնում է նրա „վարքը“ պակասեցնել։ Ինչո՞ւ։ Տեղեկացել է, որ մի քանի հոգի հայերէն կամ թիւրքերէն են խօսում իրար մէջ։

— Հազիւ քո „եանցի“ խնդիրը վերջացաւ, հիմի էլ հայերէն ե՞ս խօսում—նկատում է վրդովուած տեսուչը։

Ի՞նչ „եանցի“ խնդիր է, կասէք դուք։ — Դա հայկական ազգանունների վերջաւորութիւնն է, որ յիրաւի դարձել է մի պետական խնդիր քաղաքականութեան սիրահարների համար։ Դպրոցներում մանաւանդ—էլ չենք ասում վարչական հաստատութիւններում — ստիպում են գործ չածել „եանց“, այլ դրա տեղ „օվ“, հակառակ ազգանուն տիրող ցանկութեան։ Դրա չնորհիւ է, որ նոյն անունը, որ հայոց շրջաններում Տէր Պետրոսեան է, գիմնազիայում դառնում է Տէր Պետրոսով, Կարապետեանը՝ Կարպով, Գրիգորեանը՝ Գրիկուրով։ Ծաղր մի կարծէք։ — „Եանցի“ խնդիրը դեռ իր ամենաջերմ շրջանումն է և թէև ծնունդ է առել 19-րդ դարում, այնուամենայնիւ բոլոր նշաններին նայած՝ պիտի զբաղեցնի միապետութեան գործակալներին և ներկայ 20-րդ դարում. . .

Շատ տարիներ առաջ, ռուսական տիրապետութեան նախկին շրջանում, երբ ամբողջ նահանգներ զուրկ էին մի հատիկ ռուսերէն իմացողից անգամ, կառավարչական կարգադրութիւն եղաւ պաշտօնական թղթերը գրել, բացի ռուսերէնից, նոյնպէս և վրացերէն, հայերէն ու թիւրքերէն լեզուներով. սակայն դա միշտ մնաց և մնաւանդ այժմ մնում է իբրև մեռելածին մի ձև, որը նոյնիսկ իբրև ձև հալածուեց, երբ կառավարութեան ղեկը անցաւ այս կամ այն „անողոք“ կովկասատեացի ձեռքը և երբ սկսուեց նոր քաղաքականութիւնը. . .

Այս քաղաքականութեան նպատակն է, իհարկէ, և այն, որ որքան կարելի է շուտով, արագօրէն վերացնի տեղական լեզուի ոչէ կարևորութիւնը և աշկարայ դարձնի նրանց անպէտքութիւնը ոչէ գործում։ Եւ իրօք։ Պաշտօնական տեսակէտից, կովկասեան ոչ մի լեզու արժէք չունի։ Հայը, վրացին իրենց լեզուն սիրել կարող են միայն պատօնական, վերացական սիրով։ Գործնական կեանքի մէջ նա անարժէք է։ Նրան հալածում, նրան ծաղրում, նրան անպէտք են համարում։ Ինչքան էլ գիտնական լինէք հայոց կամ վրաց լեզուի մէջ և ինչքան էլ կատարելագործուած այդ լեզուներում, ձեզ չեն թոյլ տայ մի քայլ անգամ անել ոչ դատարանում, ոչ հասարակութեան մէջ, ոչ փոստում, ոչ ոչէ վարչատան մէջ։ Շատ անգամ նոյնիսկ տեղական լեզու իմացող պաշտօնեաներին արգելուած է խօսել այդ լեզուներով և եթէ մէկը խօսում է, նրա վրայ „ծուռ աչքով“ են նայում։ Շատ կան հայ պաշտօնեաներ, որոնք ոչ միայն իրենց „եանցը“ դարձրել են „օվ“, այլև ամենայն եռանդով աշխատում՝ են ցոյց տալ, որ նրանք չգիտեն իրենց մայրենի լեզուն, չեն կարդում հայերէն լրագիր կամ գիրք։ Եթէ „մեծը“ իմանայ, որ իր ստորադրեալ հայ պաշտօնեան իր որդուն կամ աղջկան տուել է հայոց դպրոց —նրա մասին լաւ կարծիք չի տայ իշխանութեան։ Հայ հարուստը կամ վրացի ազնուականը, եթէ ոչէ կապ ունի կառավարչական հիմնարկութիւնների հետ, շատ անգամ ստիպուած է՝ ոչէ ազգային հիմնարկութեան նուէր արած միջոցին, մի բան էլ նուիրել, օրինակ, Ուղղափառութիւն տարածելու ընկերութեան, որպէսզի

*) „Փեչատած“ ժողովրդի հասկացողութեամբ նշանակում է „կնքած“, մինչդեռ խօսքը տպած թղթամարի մասին է, որ ինքը թարգմանը չի հասկանում։

„խենթ“ հայեացքների նիւթ չդառնայ։ 1892 թուին, Թիֆլիսում, մի հայ պաշտօնեայ կառուցեց մի տուն և, կամենալով քարուցեխի մէջ էլ ցոյց տալ իր հաւատարմութիւնը, տան ճակատին ահագին տառերով գրեց. „Տէր, պահեա՛ զկայսրն մեր“... Եւ իբրև վարձատրութիւն՝ նրա տունը թանկ գնով վարձեցին նահանգական վարչութեան համար։

Ահա թէ ինչ զօրեր, անբարոյականացուցիչ միջոցներով վարժեցնում են ամբողջ սերունդներ՝ քծնելու, ստորանալու արհեստին — մի սերունդ, որ առանց այն էլ լի է բարոյական արատներով։

Այդ ուղղութիւնը այնքան ծայրայեղութեան է հասել, որ ամէն մի պոլիցմէյստեր իր անժխտելի պարտք և իրաւունքն է համարում արգելել վաճառականին կամ արհեստաւորին իր խանութի ցուցանակը իր մայրենի լեզուով գրել։ Պիտի ռուսերէն լինի. փոյթ չէ թէ անցորդը անկարող է այդ լեզուով մի կօշկակար, մի մահուդի խանութ կամ մի դեղատուն գտնել։

Աւելին։ Վճռական կերպով արգելում են, դիցուք, քաղաքի ոևէ փողոցին տալ մի նշանաւոր վրացի կամ հայ գործիչի անուն, կամ ոևէ գրադարան հիմնել մի տեղացի գործողի անւամբ։ Երևանեան նահանգի գիւղերից մէկում ուզեցին բանալ մի գրադարան Գրիգոր Արծրունու անւամբ։ Արգելեցին։ Ստիպեցին ընտրել Պուշկինի անունը. թոյլ տուեցին։ Իհարկէ, ոչ այն պատճառով, որ անմահ Պուշկինը—որի անունը այդ գիւղում առաջին անգամ էին լսում—սիրելի էր հակապուշկինեան նահանգապետին, այլ այն պատճառով, որ „յամենայն դէպս“ նա ռուս է... Այդ իսկ պատճառով ոչ ոքի մտքով անգամ մինչև այժմ էլ չէ անցնում, օրինակ, խօսք բանալ Թիֆլիսի ոևէ հրապարակի կամ փողոցի վրայ մէկ արձան կառուցանելու կովկասեան այնպիսի գործողների յիշատակին, որոնց անունը միշտ պիտի կազմէ այդ գեղեցիկ երկրի վշտալի պատմութեան պարծանքը։ Դա կը համարուի ցոյց կառավարութեան դէմ, դա կը նկատուի յեղափոխական փորձ...

Դրա փոխարէն երևի մօտիկ ապագայում կովկասեան քաղաքների հրապարակները կը սկսեն զարդարել այնպիսի գեներալների և կառավարիչների արձաններով, որոնց միակ մեծութիւնը եղել է կամ արիւն թափել կամ ստրկացնել, որոնց անունը կովկասեցին կը ծածկէր, եթէ ազատ լինէր, միմիայն անարգանքով և ատելութեամբ։ Վրաստանի միացման 100-ամեակի „պաշտօնական“ տօնախմբութիւնը, որ պիտի տեղի ունենայ սեպտեմբերին, առաջին նշանն է այդ տխուր հանդիսարանի...

Կը բարձրացնեն Գեսլերեան գլխարկները և կը ստիպեն ժողովրդին գլուխ խոնարհեցնել...

Հելվեցիան Վիլհելմ Տէլլ ծնեց՝ այդ անարգ գլխարկը ոտի տակ տալու համար...

Զի՞ ծնի արդեօք մի նոր Վիլհելմ Տէլլ այն վիթխարի լեռների ստորոտում, ուր ըմբոստ Պրոմեթէոսը երկնքի կրակը խլեց...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՍԵՐՈԲ-ԱՂԲԻՒՐ

(Շարունակ. — Տես N՝ 4)

—

Սերոբ իր կուռղի անզուգական տաղանդին հետ ունէր նաև կազմակերպողի ձիրք և ընդունակութիւն։ Ոչ միայն մարտական խումբեր կազմակերպեց, զինուորական կարգապահութիւնով և հնազանդութիւնով, այլև իր գտնուած շրջանակին մէջ փորձեց տեսակ մը ինքնավարչական դրութիւն հաստատել։ Ախլաթի ամէն-մէկ գիւղի մէջ բանիբուն և ձեռնհաս անձինքներէ կազմուած մարմիններ ստեղծեց, որոնք՝ իրենց իրաւասութեան տակ՝ բոլոր յարաբերական կամ քաղաքային գործեր դատելու և վճիռներ տալու իրաւունք ունէին, փոխանակ կառավարութեան տնաքանդ միջամտութեան դիմելու։ Նոյնիսկ եթէ ոճիր պատահէր, իրենք իրենց ձեռքով կը վերջացնէին։ Միմիայն ամենածանր և կնճռոտ պարագային, երբ տեղական ինքնօրէն դատարաններ անկարող ըլլային վճիռ մը տալու, կը դիմէին Թ... Բիւրօյին կամ տեղական լեզուով, Կեդրօնական Ժողովին, որու նախագահն էր ինքը Սերոբ, և իբր գերագոյն ատեան, անոր վճիռը բացարձակ էր։ Այնպէս եղաւ որ ոչ մէկ գիւղացի չէր մտաբերեր ոևէ գործի համար կառավարութեան դիմել՝ անոր արդարութիւնը աղերսելու համար։ Սէր, միութիւն և եղբայրութիւն զգալիօրէն իրենց լուս երեսը կը ցոյնէին Ախլաթ գաւառի մէջ. խռովութիւնները, անկարգութիւնները կը սկսէին անհետանալ. ժողովուրդը բարելաւ դրութեան մէջ իր հացին ու ջրին տէրն էր, շնորհիւ այն ապահովութեան, որ հայ յեղափոխականները ստեղծած էին և որուն առջև հակառակորդ թշնամիներն իսկ, ամօթահար և պատկառոտ, չէին վարաներ իրենց համակրանքը և գոհունակութիւնը յայտնել և եթէ ոևէ դատ ունենային՝ կամ՝ էնային կառավարութեան միջոցով տեսնել։ Մինչև վերջերը այսպէս էր նաև Սասունի մէջ։

Այսպէս Ախլաթ գաւառի վարչական վերին հսկողութիւնը կախուած էր Սերոբէն, որ կը կառավարէր երկիրը երբեմն իր այցելութիւններով, շատ անգամ ալ թղթակցութիւններով։ Սերոբ, իրաւ է, մանկութենէն կարդալ-գրել չէր սորված, բայց պանդխտութեան մէջ բաւականաչափ զարգացած էր. կը գրէր պարզ նամակներ, տոմսակներ և ստորագրելէն յետոյ ալ կը կնքէր իր արծաթէ մատնիով, որ Ա. Ս. սկզբնատառերը կը կրէր։ Թերթեր, գրքոյկներ շարունակ կը կարդար և պարզ ու ամենալուրջ նկատողութիւններ կընէր։ Իր կարծիքը բազմաթիւ բանիմաց և ինտելիկէնտ ընկերներու կողմէ սիրով և հիացմունքով կը գնահատուէր։

Բայց երթալով Աղբիւրի և իր քաջարի խմբին գոյութիւնը կառավարական շրջանակներու մտատանջութեան նիւթ կը լլար։ Մէկ օր՝ Պոլսէն կտրուկ հրահանգ եկաւ որպէս զի ողջ կամ մեռած, ինչ գնով ալ ըլլայ, ձեռք ձգուի ապստամբ հայը, որուն համբաւը օրէօր կը մեծնար, հիացում և սոսկում պատճառելով։

Կառավարութիւնը նախապէս զգուշացաւ ձայնը դուրս հանել, և եւրոպական ներկայացուցիչներուն ուշադրութիւնը չհրաւիրելու համար՝ հայերէ և թիւրքերէ գաղտնի յանձնաժողով մը կազմեց, որուն անդամները գեղէ

գեղ ման գալով գիւղացիներէն խոստում ու ստորագրութիւն կ'առնէին որ Սերոբին և իր խմբին ոևէ օժանդակութիւն չընեն և չի հիւրընկալեն։

Օգուտ չբրաւ։

Այդ օրէն կառավարութիւնը բացարձակ և անողոք կերպով սկսաւ հալածել այդ հայ կտրիճներու խումբը, որ հայ յեղափոխութեան անսպառ կորովը կը մարմնացնէր մեր թշուառ հայրենիքին մէջ։ Այդ յուսահատ հալածանքները տեղի ուին շարք մը ընդհարումներու, որոնց մէջ հայ յեղափոխականը ցցուց իր բարոյական ու ռազմական առաւելութիւնները։

Ընդհարումներու այդ շարքին մէջ նշանաւոր պիտի մնայ 1898 հոկ. 20-ի կռիւը։

Այդ օրը Աղբիւր և իր ընկերներէն 16 հոգի կը գտնուէին Բաբշէն (Բաղէշէն կէս ժամ հեռու), ուրկէ պիտի անցնէին երթային։ Մատնութեան մը վրայ կառավարութիւնը լուր առնելով՝ իսկոյն ջոկատ մը զօրք կը ղրկէ, որ առտուն կանուխ կուգայ, կը պաշարէ գիւղին չորս կողմը և շրջակայ սարերը։

Աղբիւր, անցած-դարձածէն իրազեկ, կաճապարէ դուրս ելլել իր թաքստոցէն կուի յարմար դիրքեր գրաւելու համար։ Թշնամին զանոնք տեսածին՝ կրսկսի կրակ ընել

— Տղա՛ք, կը պոռայ Աղբիւր, կուեցէ՛ք և դիմացի քարերը բարձրացէ՛ք։

Հայ քաջերը թշնամիի կրակին տակէն անվրդով գիւղին դիմաց՝ բլուրները կը մագլցին։ Այդ միջոցին հայ տղոց մէկուն ոտքը թեթև կը վիրաւորուի։

Անգամ մը, որ կը հասնին թաքստի տեղերը և դիրքեր կը գրաւեն, այլևս իրենք կրսկսին կարկուտի պէս կապար տեղալ։ Ամբողջ 2 ժամ կը տևէ կռիւը, բայց թիւրքերը կեցած տեղերնին գամուած՝ գլուխնին չեն կրնար վեր բարձրացնել։ Հրամանատարը, կատղած, քաղաք կը վերադառնայ թնդանօթ և նոր զօրք բերելու։

— Ի՞նչպէս եղաւ, կը հարցնէ կուսակալը, պիտի բռնէ՞ք, խորտակէ՞ք այս անգամ թէ ոչ։

— Կամ կը կոտորենք ամէնքն ալ, կամ ողջ կը բռնենք. այս անգամ ձեռուընուս չեն ազատիր, կը պատասխանէ հրամանատարը։

Օգնութեան հրաւէրին վրայ՝ շրջակաները եղած բոլոր քիւրդերը, նոյնիսկ խուժանէն մաս մը, ձեռքը անցած զէնքով, վազեր եկեր էին Բաբշէն Սերոբ փաշան ձերբակելու համար։

Բայց այդ անխորհուրդ և մոլեռանդ ոգևորութիւնը շուտ սմքեցաւ։ Փէդայիներու սուլող գնդակները տարտղնած էին այդ ամբոխը, որ մահուան սոսկումը ունէր։ Խուճապը ահաւոր և ծիծաղելի էր միանգամայն։

Ժամը 6 էր, երբ թնդանօթներու առաջին որոտը սկսաւ արձագանքել լեռներու լանջերուն վրայ։

Կանոնաւոր զօրքը կատաղի կը կուէր, մինչ մէկ կողմէն անընդհատ ռազմամթերք կը հասցնէին քաղաքէն։ Իսկ Փէդայիները իրենց մօսիները կը շտկէին ուղղակի թընդանօթաձիգներուն վրայ, որոնցմէ քանիներ գլորեցին, այնպէս որ այլևս ոչ ոք սիրտ կընէր նորէն լեցնել պարպուած թնդանօթները, որոնք պատերազմի դաշտին վրայ անգործ կը յօրանջէին։ Քանի մը անյաջող փորձերէ ետք, հազարապետը կը հրամայէ ջոկատին միահամուռ արձակել հրացանները, որոնց մեծադղորդ որոտումը կը թնդացնէր սարձոր։ Օգտուելով այդ աղմկալից միջադէպէն, թնդանօթաձիգները կաճապարեն կերպով մը լեցնել թնդանօթները։ Ռումբերը կը սուրան, կը թռչին Փէդայիներու գլխուն վրայէն առանց անոնց վնասելու։ Հայ հերոսները աւելի ու աւելի կոգևորուին և իրենց շեշտահար գնդակները դիտապաստ կը փռեն թնդանօթաձիգներէն չորսը, որոնցմէ մէկը, իբր պետ, մեծ յարգ կը վայելէր կառավարութեան մօտ։

Թիւրք հրամանատարը, շուարած ու կատաղահար, թնդանօթներուն անզօրութիւնը տեսնելով, հրաման կընէ բանակով գրոհ տալ ափ մը քաջերուն կեցած դիրքերուն վրայ։

Զօրքը հազիւ առաջ կը խաղայ, հայ գնտակներու տարափին տակ հասած տանծի պէս կը թափին նախայարձակները։ Ասոր վրայ յուսահատօրէն զօրքը կը նահանջէ, անիծելով հրամանատարը, և սրտին մէջ ուխտելով ուրիշ անգամ „ջան Փէդայիին" վրայ չերթալ։

Կռիւը կը շարունակուի հեռաւորութեան վրայ, բայց աւելի պաշտպանողական և պաշարողական դրութիւնով։ Աղբիւրին խրախուսական խօսքերը առիւծի կը փոխէ հայ կտրիճները, որոնք ուրախ-ուրախ կերգեն ու կը կռուին, թշնամին գնդակահար ընելով։ Ժամը 10-ին մօտերը՝ թշնամիի գնդակ մը գլխէն կը զարնէ բուլանղցի ընկեր Սարգիսը. քաջը անշշուկ կը կքի և կաւանդէ հոգին։ Քովի ընկերը լուր կուտայ Աղբիւրին։

— Սարգիսը չի գիտեմ քնա՞ւ, ի՞նչ եղաւ։

— Բան չկայ, ան թող քնէ, դուք կուեցէք, կը պատասխանէ Աղբիւր։

Կռիւը անդուլ մոլեգնութիւնով կը տևէ մինչև իրիկուան մութը, և թշնամին պատկառելի հեռաւորութեան մը վրայէն քայլ մը առաջ չի կրնար գալ։

Հեռանալու ժամանակն է։ Մերիները չորս կողմէն պաշարուած են. թշնամին իր ներկայութիւնը կը մատնէ վայրենի աղաղակներով, իր զոհ տուած անչափ դիակներու տեսքէն մոլեգնած։

Աղբիւր կը հաւաքէ իր ընկերները բոլորը միասին և անշշուկ՝ դիրքերու մէկ կողմէն վար կիջնին, որպէս զի եթէ պատահին թիւրքերու՝ զարնեն անցնին։ Սակայն ապահով կը յաջողին կտրել շղթան, երբ թշնամին միամտօրէն կը շարունակէր տակաւին գնդակոծել ամայացած դիրքերը։

Այդ դիւցազնական և անմահ կռուին մէջ՝ Սերոբի ընկերներէն մինակ բուլանղցի Սարգիսը կրսպանուի և երկու ընկեր ալ թեթև կերպով կը վիրաւորուին։ Թշնամիին կորուստը 30-էն աւելի էր։

Կռուին օրը քաղաքին ամբոխը կը յարձակի հայոց խանութներուն վրայ կողոպտելու համար. հայերը կը դիմադրեն, երկու զոհ և 30 վիրաւոր ունենալով։ Կառավարութիւնը կը փութայ սակայն խառնակութիւններուն առջևը առնել։

Բաբշէնի դէպքը ահ ու սարսափի մէջ ձգեց թիւրք ժողովուրդը. Փէդայիի ազդած սոսկումը չափ-սահման չունէր։ Կառավարութիւնը կրկնապատկեց գիշերապահներու խումբերը, վախնալով որ Սերոբ քաղաքին վրայ կը յարձակի յանկարծ։ Իսկ հայերէն անոնք, որ անտարբեր էին, այդ օրը պարծանքով ու յարգանքով բերան կառնէին Փէդայիի՝ ազատութեան զինուորի անունը, որ հաւատ և յոյս կը ծաղկեցնէ սրտերու մէջ։

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

VIII

Պատմական ամենաահռելի կատաստրոֆները ունեցել են յաճախ ամենաբարերար հետեւանքներ ազգերի յառաջադիմութեան տեսակէտից։ Այդ իրողութիւնը դիտելի է մանաւանդ Ֆրանսա-պրուսական պատերազմից յետոյ։ Ֆրանսիան ջախջախուած էր. ներքին և արտաքին փոթորիկները իսպառ քամել էին նրա կենսական հիւթերը։ Թուում էր, թէ նա յաղթահարուած էր ընդմիշտ. թուում էր, թէ երբէք կամ երկար ժամանակ չպիտի կարողանար նա վերականգնել իր նախկին հմայքը և ազատուել հինգ միլիարդի ծանր, ճնշող բեռից, որ թշնամու անգթութիւնը հարկադրել էր նրան։

Իրականութիւնը, սակայն, այլ բան ցոյց տուեց։ Ճգնաժամը շուտ անցաւ։ Անտարակոյս, Էլզաս-Լոտարինգիայի կորուստը մնաց Ֆրանսիացիների սրտում իբրև անբուժելի մի վէրք, որ վրէժ ու բրվա՞նշ էր աղաղակում անդադար։ Բայց Ֆրանսիան շատ շուտ կազդուրուեց բախտի անօրինակ հարուածներից։ Եթէ նա ունեցաւ Սեդան, ապա ունեցաւ և հանրապետութիւն, իբր հատուցում։ Եթէ նա կորցրեց 5 միլիարդ և Էլզաս-Լոտարինգիա, ապա կորցրեց ընդմիշտ և կայսերական բռնակալութեան տխուր էմբլեմը...

Այո՛, եղաւ մի վայրկեան, երբ յեղափոխութիւնների մշտական հայրենիքը գտնուում էր անէացման, իսպառ կորստեան անդնդի ծայրին. բայց նա հեգնեց վեհապանծօրէն ճակատագրի բռնադատող ուժը և հսկայական մի թռիչքով յայտնուեց անդնդի հակառակ ծայրին։ Ֆրանսիան հանրապետական էր այլևս. ազատութեան ոգին 1789-ի պանծալի օրերից ի վեր՝ թափառելով, խարխափելով՝ գտաւ վերջապէս ինքզինքը. 100 տարուայ անլուր փորձութիւններից յետոյ՝ հանրապետական հդէան իրագործուեց վերջնականապէս։ Ֆրանսիան նոր կեանք առաւ։ Ընդհանուր ընտրողական իրաւունքի, պարլամենտական ազատ ռէժիմի տակ՝ նա վերածնուեց։ Նրա աշխատանքը հրաշքներ գործեց, նրա առևտուրն ու արդիւնաբերութիւնը բարգաւաճեցին և ընդամէնը մի երկու տարուայ ժամանակամիջոցում նա կարողացաւ թօթափել իր վզից ամօթալի բեռը,—նա վճարեց հինգ միլիարդը՝ ի մեծ զարմանս Բիսմարկի և ամբողջ քաղաքակիրթ աշխարհի...

—

Մեծ սլացքով առաջ գնաց նաև Գերմանիան։ Պրուսիայի իշխան Վիլհելմ I համարն Գերմանիայի կայսր հռչակուեց և գերմանական մանր իշխանութիւնները ձուլուեցին այդպիսով ի մի սահմանադրական պետութիւն՝ պրուսական հովանիի տակ։

Միութիւնը չուկէտ եղաւ երկրի անսովոր բարգաւաճման։ Կապիտալիզմի զարգացման պրոցէսը աւելի սրարշաւ առաջ գնաց այստեղ, և կարճ ժամանակում այստեղ ևս կատարուեց հասարակութեան յստակ բաժանումը դասակարգերի՝ որին հետևեց ճակատագրական կերպով սոցիալական շարժման ահեղ ծաւալումը։ Կազմակերպուեց և արագաքայլ աճեց Սոցիալ-Դեմոկրատիան, որը ճիւղաւորուելով ամբողջ գերմանական աշխարհում՝ դարձաւ հետզհետէ ահարկու մի ուժ և մի ճշմարիտ խարազան բիսմարկեան կառավարչական սիստէմի համար։

Դեռ պատերազմի միջոցին էր, որ միջազգային այդ կուսակցութիւնը իր ձայնը բարձրացրեց յանուն ազգերի համերաշխութեան, եղբայրաբար իր ձեռքը մեկնեց յաղթուած Ֆրանսիայի յաղթուած պրոլետարիատին և յանձին Բէբէլի ու Լիբկնեխտի՝ մոլեգին բողոքեց պատգամաւորական ժողովում՝ Էլզաս-Լոտարինգիայի միացման դէմ, յայտարարելով այն՝ բռնի, անամօթ յափշտակութիւն։ Խիզախութիւնը չարաչար պատժուեց. սոցիալիստական երկու աւագագոյն պատգամաւորները բանտ նետուեցին երկու տարի ժամանակով. նրանց ձայնը մարեց շովինիզմի կատաղի յորձանքի մէջ. բայց սոցիալ-դէմոկրատիան այն օրից անխոնջ առաջ տարաւ իր պատմական առաքելութիւնը՝ ազգերի համերաշխութիւն քարոզելով և բանւորական մասսաները կազմակերպելով։ Քսան տարուայ բիսմարկեան բռնակալութիւնը և 12 տարուայ (1878-1890) „բացառիկ օրէնքների“ սարսափները անզօր եղան կասեցնելու սոցիալական շարժումը և նրա քաղաքական արտայայտիչ՝ սոցիալ-դէմոկրատիայի աճումը։ Հզօր ու միացեալ Գերմանիայի մէջ նա դարձաւ նոյնքան հզօր ու միացեալ մի կազմակերպութիւն, որ այսօր համարւում է սոցիալիստական ամենամեծ բանակը ամբողջ աշխարհում և ամենաուժեղ քաղաքական կուսակցութիւններից մէկը իր հայրենիքում։

Այո՛, և այդ բոլորը շնորհիւ հայրենիքի միութեան... Այդ է պատճառը, որ բիսմարկեանների հետ միասին — թէև միանգամայն տարբեր նկատումներով — Միութեան յաղթանակը ողջունում են ամէն տարի նաև Գերմանիայի սոցիալիստները։

—

Իրաւ է, սակայն, որ պատերազմի այդ դրական հետևանքների հետ երևան եկան շուտով նրա բացասական հետևանքները ևս։ Մեծ բարիքների հետ և մեծ չարիքներ.—անխուսափելի, ճակատագրական զուգընթացութիւն...

1870-71 թ-ի ճգնաժամը ծնեց այն ամէհի, հազարագլխեան վիշապին, որ այսօր հպարտ գլուխ է բարձրացնում ամէն տեղ և ուզում է խեղդել իր ճիրաններում ժամանակակից սոցիալական օրգանիզմը։ Նրա անունը միլիտարիզմ է։ Պատերազմի արիւնոտ դաշտում իր միութիւնը կռելով՝ Գերմանիան դարձաւ գրեթէ յանկարծակի զինւորական ամենահզօր պետութիւնը, որ Եւրոպայի սրտում նստած՝ ահ էր ներշնչում հարևաններին։ Բիսմարկի իղձն իրագործուած էր. Գերմանիան, արդարև, առաջին պետութիւնն էր Եւրոպայում։ Այդ հանգամանքն արդէն տակնուվրայ էր անում միջազգային քաղաքական յարաբերութիւնները, խախտում էր եւրոպական հաւասարակշռութիւնը։ Պէտք էր ապահովել նոր ու անակնկալ ընդհարումների պերսպեկտիվից... Եւ ահա Ֆրանսիայի հետ ամբողջ Եւրոպան սկսեց անընդհատ զինուել, սկսեց յեղաշրջել զինւորական ամբողջ սիստէմը նորագոյն պահանջների համաձայն։

Ոչ պակաս անհանգիստ էր ինքը՝ գոռոզ յաղթողը։ 1888 թ. փետրուարի 6-ին ռայխստագի մէջ արտասանած

իր հռչակաւոր ճառում երկաթէ կանցլերը յայտարարում էր, որ Գերմանիան ենթակայ է միանւագ յարձակման իր արևմտեան ու արևելեան սահմաններից, և թախանձագին յորդոր էր կարդում Գերմանիայի ներկայացուցիչներին՝ քէէարկել իր պահանջած զինուորական ծախքերը։ „Այն ուժերը, որ մենք պահանջում ենք — ասում էր Բիսմարկ — դատապարտում են մեզ խաղաղ քաղաքականութեան... Ես խորհուրդ կըտայի օտարներին ևս հրաժարուել սպառնալիքների սիստէմից. մենք գերմանացիներս վախենում ենք միմիայն Աստուծուց և ոչ մի ուրիշ բանից աշխարհիս երեսին“... „Սպառազէն խաղաղութիւն“ — ահա մեր ժամանակի նշանաբանը։ Տենդային եռանդով զինւում են բոլոր պետութիւնները և միաժամանակ բոլորն էլ հանդիսաւոր կերպով ծանուցանում են, թէ դա „յանուն խաղաղութեան“ է...

Միևնոյն խաղաղութեան կամ ապահովութեան ստիպողական պահանջն էր, որ մղեց պետութիւններին դէպի զինակցութիւններ։ Բիսմարկի հնարագիտութեան շնորհիւ 1879-ին Գերմանիան դաշն կապեց քիչ առաջ ջախջախուած իր ոխերիմ թշնամու՝ Աւստրիայի հետ, և չորս տարուց յետոյ այդ դաշնակցութեան յարեց Իտալիան։ Առաջ եկաւ այդպիսով հռչակաւոր երեքպետեան դաշնակցութիւնը։ Դաշնակից էր փնտրում և Ֆրանսիան։ Գերմանիայի կրկնակի յարձակման հաւանականութիւնը մղեց նրան հետզհետէ Ռուսաստանի գիրկը, որը նոյնպէս կարօտ էր զինակցի, բայց մանաւանդ դրամ... Ահա և երկպետեան դաշնակցութիւնը։

Հետևենք այժմ պետութիւնների քաղաքականութեան՝ 1870-ից սկսած։ Միջազգային յարաբերութիւնները բարդացան, կնճռոտուեցին. քաղաքական հորիզոնը էլ աւելի մռայլուեց։ Այժմ երեք մեծ խնդիրներ յայտնուեցին ասպարէզի վրայ, որոնք տօն տուին միջազգային քաղաքականութեան։ Դրանք են՝ Էլզաս-Լոտարինգիայի խնդիր, սօցիալական կամ բանուորական շարժում և արևելեան խնդիր։ Վերջինս, իհարկէ, առաջինն է հանդիսանում թէ ժամանակագրական կարգով և թէ իր սուր բնաւորութեամբ։

Յեղափոխական խմորումը դադար չէր առնում Բալկանեան թերակղզում։ Այնտեղ դեռ կային քրիստոնեայ ազգութիւններ, որոնք հեծում էին տաճկական խարազանի տակ։ 1875-ին ապստամբեցին սերբաբնակ Բոսնիա ու Հերցեգովինա։ Ահա այն կտրուկ, ազդու մանիֆէստը, որով ապստամբները դիմում էին աշխարհին. „նա, ով անձնական փորձով չի ճանաչում թիւրք բռնակալութիւնը, նա, ով ականատես չի եղել քրիստոնեայ ազգաբնակութեան տառապանքներին, չի կարող նոյնիսկ մօտաւոր կերպով պատկերացնել իրեն, թէ ինչ է դրայեան“, այդ անլեզու էակը, անասունից էլ ստոր, որ ծնուած է յաւիտենական գերութեան համար։ Մեր հողի ամէն մի կտորը ողողուած է մեր նախնիքների արիւնով ու արցունքներով։ Այսօր այդ „դրայեան“ վճռել է կուռել իր ազատութեան համար կամ թէ մեռնել մինչև վերջին մարդը“...

Ապստամբները յայտարարեցին Բոսնիա-Հերցեգովինայի միացումը Սերբիայի հետ։ Շարժումը աջող էր գնում. թիւրքաց զօրքի թիւը երկու ապստամբ երկիրների մէջ հազիւ հասնում էր 2,000-ի։ Պետութիւնները՝ երկիւղ կրելով Բալկանեան ընդհանուր հրդեհից՝ փութացին միջամտել։ Աւստրիան, որ առանձնապէս շահագրգռուած էր, միջնորդ հանդիսացաւ թիւրք կառավարութեան և ապստամբների միջև, որոնք այսպէս ձևակերպեցին իրենց պահանջները. 1) լիակատար կրօնական ազատութիւն քրիստոնեաների համար, որոնք պիտի ունենան մահմէդականների հետ հաւասար իրաւունք վկայութիւն տալու արդարադատութեան առաջ. 2) տեղական ժանդարմերիայի կազմակերպութիւն. 3) հարկերի սահմանումն ըստ էութեան ու քանակութեան և հարկահանների կամայականութեան վերացում։

Պահանջները ներկայացրին սուլթանին և ընդունեցին... այնպէս, ինչպէս 61-րդ յօդուածը և մայիսեան ծրագիրը Հայաստանի վերաբերմամբ։ Սուլթանը սկզբունքով ընդունեց, բայց մի քայլ անգամ չ'արաւ դէպի իրագործումը։ Իսկ ապստամբները պահանջում էին կենդանի ապացոյց. նրանք պահանջում էին տաճկական զօրքի հեռացիլը և պետութիւնների երաշխաւորութիւնը՝ ռէֆորմների իրագործման համար։ Եւրոպան խուլ ականջ արաւ ու յամառեց իր թուլամորթ քաղաքականութեան մէջ։ Բայց ահա շուտով վրայ հասան անցքեր, որոնք աւելի ուժգին ցնցեցին հասարակական կարծիքը Եւրոպայում և ստիպեցին պետութիւններին տարբեր դիրք բռնել սուլթանի նկատմամբ։ Մայիսի 7-ին 1876 թ. Սալոնիկում օրը ցերեկով ֆրանսիական և գերմանական հիւպատոսները խողխողուեցին մահմէդական խուժանի ձեռքով։ Դրա հետ միաժամանակ սկսուեցին ջարդերը Բուլգարիայում։

Ենթարկուած միևնոյն մարդախոշոշ ռէժիմին և հարևան ազգերի ազատագրական փորձերով քաջալերուած՝ բուլգարները ևս շարժուեցին վերջապէս և բռնութեան դէմ բռնութիւն քարոզեցին։ Հէրքէզների խժդժութիւնները 1875-ին առաջ բերին թոյլ ապստամբութիւն Ստրիլեցայում. 10,000 բաշիբոզուկներ եկան Եըլդըզի հրամանով խեղդելու նորաբողբոջ շարժումը։ Միմիայն Բատակ կոչուած փոքրիկ քաղաքում 7,000 ազգաբնակութիւնից 6,000-ը մորթուեցին բարբարոսութեան ահռելի նրբութիւններով. 79 շէն գիւղեր մի քանի օրուայ մէջ հրդեհի մատնուեցին. 15,000-ից աւելի կոտորուեցին և 80,000 հոգի մնացին անապաստան։ Ամբողջ գաւառը դարձաւ գերեզմանոց։

Անցքերը գահավիժում էին իրար վրայից։ Եւրոպան ալեկոծուում էր։ Երկու հիւպատոսների սպանութիւնը աւելի էր բորբոքում թիւրքատեաց շարժումը, քան „բուլգարական սարսափները“... Պէտք էր շուտընդփոյթ միջամտել։ Ցարը գնաց Բերլին. երեք դիւանատների ներկայացուցիչները խորհեցին ու մշակեցին Բերլինի նշանաւոր մէմօրանդումը, որը պահանջում էր բուլգար ապստամբներից երկու ամսայ զինադադար. այդ ժամանակամիջոցում պիտի ձեռնարկուէին սուլթանի կողմից ազդու միջոցներ՝ նրանց պահանջներին գոհացում տալու համար։ Հակառակ դէպքում ամբողջ Եւրոպան միաբանելով՝ պիտի բռնութեամբ իր կամքը թելադրէր թիւրք կառավարութեան։ Մէմօրանդումը խմբագրուեց Ռուսիայի կողմից և ընդունուեց Ֆրանսիայից ու Իտալիայից։ Անգլիան հրաժարուեց. Լորդ Բիկոնսֆիլդ՝ մինչև ուղուածուածը տոգորուած հակառուսական տենդենցիաներով՝ ոչ մի միջոց չէր խնայում արգելելու Ռուսաս-

տանի խիզախ ծրագիրների իրագործումը և յանուն այդ նպատակի նա նոյնիսկ մոլեռանդ պաշտպան հանդիսացաւ „Թիւրքիոյ ամբողջութեան“ ու մի աւժամանակ ոճրագործօրէն քաջալերեց բօսնեակների և բուլգարների դահճապետին։

Միևնոյն գիշերը (29-30 մայիս 1876), երբ մեմորանդումը պիտի ներկայացուէր Թիւրք կառավարութեան, սուլթան Աբդիւլ-Ազիզ անսպասելի կերպով գահընկէց եղաւ և երկու օր յետոյ խողխողուեց։ Թագաժառանգը՝ Մուրադ V սոսկ գործիք էր „Երիտասարդ. Թիւրք“ կոչուած կուսակցութեան ձեռքում, որի ամենաականաւոր ներկայացուցիչն էր Միթհատ փաշա, իբր թէ ազատամիտ, բայց իրօք ֆանատիկոս մի Թիւրք, վառուած ատելութեամբ դէպի Եւրոպան և եւրոպական քաղաքակրթութիւնը։ „Նոր ռէժիմը“ վճռեց վերջ դնել ազատագրական շարժումներին ու պետութիւնների միջամտութիւններին։ Սերբիայի և Մօնտենեգրոյի անընդհատ զինաւորման դիմաց՝ Մուրադ V-ի կառավարութիւնը անմիջապէս բացատրութիւն պահանջեց և հետևեալ պատասխանն առաւ սերբական իշխանից. „Թիւրքաց զօրքը և բոլոր վայրենի հօրդաները պէտք է հեռանան մեր սահմաններից, և Սերբիայի ու Մօնտենեգրոյի զօրքերը պիտի խաղաղացնեն Բօսնիան ու Հերցեգովինան“։ Թիւրքիան մերժեց, և երկու դաշնակից բալկանեան պետութիւնները պատերազմ յայտնեցին նրան. յուլիսի 1-ին զօրքերը անցան սահմանը... Միևնոյն ժամանակ սկսուեց կամաւորների հոսանքը Ռուսաստանից դէպի Բալկանները. ռուս օֆիցէրներ և գեներալներ ցարի հրահանգով գնում էին կուսելու սլավօնականութեան պիղծ թշնամիների դէմ...

Արևմուտքում նոյնպէս աճում էր Թիւրքատեաց շարժումը։ Բիկօնսֆիլդն անգամ ստիպուած եղաւ զինջնել իր սեփական երկրի հանրային կարծիքի առաջ, որը անսովոր գրգռման էր հասել Գլադստօնի մերկացումներից յետոյ՝ „բուլգարական սարսափների“ առթիւ։ Անգլիական կառավարութիւնը համաձայնութեան եկաւ միւս պետութիւնների հետ՝ պահանջելու Տաճկաստանից նախ զինադադար, ապա և խաղաղացման մի ծրագիր, որով պիտի հաստատուէր վարչական անկախութիւն Բօսնիայի, Հերցեգովինայի և Բուլգարիայի մէջ։

Այդ միջոցներում առաջ եկաւ կրկին ռէժիմի փոփոխութիւն Տաճկաստանում։ Մուրադ V մի քանի ամիս թագաւորելուց յետոյ նոյնպէս տապալուեց և Եըլդըզի մահահոտ ապարանքներում նկարուեց Համիդի չարաշուք ստուերը... Պատերազմը շարունակւում էր. սև-լեռնցիք ու սերբերը ռուսաստանցի կամաւորների հետ հարուածում էին տաճկին, բայց վերջինս հետզհետէ սաստկացնում էր իր թափերը։ Սերբիայի զօրքը ջախջախուեց և Բելգրադի ճանապարհը բաց մնաց. սարսափահար, յուսահատ՝ քրիստոնեաների բանակը աչքը յառեց դէպի հիւսիս և օգնութի՛ւն աղաղակեց։ Պետերբուրգից լսուեց արձագանքը։ Ռուսաստանը անջատուեց եւրոպական կօնցերտից և որոշեց միայնակ հաշիւ տեսնել տաճկի հետ։ Աւստրիայի չէզօքութիւնը շահելու համար նա մտաւ բանակցութեան նրա հետ և երկու պետութիւնները կապեցին գաղտնի դաշինք, որով Աւստրիան պիտի գրաւէր յետագայում Բօսնիան ու Հերցեգովինան։

Պատերազմական գործողութիւնները սկսուեցին միաժամանակ Եւրոպայում և Ասիայում։ Ասիական բանակի հրամանատար Լօրիս-Մելիքօվ կարճ միջոցում գրաւեց հայկական քաղաքները՝ Արդահան ու Ղարս և դիմեց դէպի Էրզրում։ Թիւրքերը ջարդ կրեցին նաև Բալկանների վրայ։ Ռուսաց զօրքը՝ յաղթական ու սպառնալից՝ սլանում էր դէպի Պօլիս... Այն ժամանակ ահաբեկուած սուլթանը շտապեց համակերպիլ Ռուսաստանի պահանջներին։ Մարտի 3-ին 1878 թ. ստորագրեց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը։ Նա շնորհեց լիակատար անկախութիւն Սերբիային, Մօնտենեգրոյին և Ռումանիային։ Բուլգարիան յայտարարուեց հնքնավար իշխանութիւն։ Դաշնագրի համաձայն՝ Բօսնիան և Հերցեգովինան պիտի ստանային վարչական անկախութիւն և հայկական նահանգներում պիտի մտցնէին ռէֆօրմներ։

Ռուսաց զօրքի փայլուն յաղթութիւնները յարուցին Եւրոպայում մի կատաղեալ փոթորիկ։ Անգլիան և Աւստրիան բողոքեցին Սան-Ստեֆանոյի դաշնագրի դէմ։ Արևմտեան պետութիւնները փոխադարձ համաձայնութեամբ որոշեցին գումարել մի համաժողով, ուր պիտի քննէին ու գոհացուցիչ լուծում ստանային համաեւրոպական բնոյթ ունեցող բոլոր խնդիրները։ Անգլիան առաջապահն էր հակառուսական այդ պրոպագանդի։ Պէտք էր փակել Ռուսիայի առաջ բրիտանական Հնդկաստանի ճանապարհը, և ահա յունիսի 4-ին 1878 թ. Անգլիան գաղտնի դաշն կապեց սուլթանի հետ, որով պարտաւորուեց պաշտպանել ասիական Թիւրքիան Ռուսաստանի յարձակումներից, և իբր հատուցում՝ այդ ապագայ ծառայութիւնների՝ նա գրաւեց Կիպրոսը։

Այդ դէպքից մի քանի օր յետոյ, յունիսի 13-ին, բացուեց Բերլինի հռչակաւոր կօնգրէսը Բիսմարկի նախագահութեամբ։ Անգլիայի ու Աւստրիայի ազդեցութիւնը գերակշռող էր այդտեղ, և նրանք երկուսն ամենից աւելի շահեցին։ Մինը գրաւեց վերջնականապէս Կիպրոս կղզին, միւսը՝ Բօսնիա և Հերցեգովինա։ Նոյն այդ երկուսի ջանքերով էր, որ հիմնապէս փոփոխուեց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը և ջնջուեցին նրա ամենահամակրելի կէտերը՝ քրիստոնեայ ազգութիւնների վերաբերեալ։ Այդ դաշնագրով ազատ հռչակուած Մեծ Բուլգարիան, որ ամփոփում էր իր մէջ բացի բուն Բուլգարիայից նաև Արևելեան Ռումելիան և Մակեդոնիայի մեծագոյն մասը, բաժանուեց երեք մասերի. Արևելեան Ռումելիան և Մակեդոնիան անջատուեցին Մայր-Բուլգարիայից. առաջինը դարձաւ ինքնավար նահանգ քրիստոնեայ կառավարութեամբ, երկրորդը նորից վերադարձուեց իր դահճին... Հայաստանի ու Մակեդոնիայի վերաբերմամբ մտցուին դաշնագրի մէջ 61-րդ և 23-րդ յօդուածները, որոնք պիտի մնային մեռած տառ։

Այո, արևելեան քրիստոնեաների դատը զոհ գնաց հաւաքական Եւրոպայի և մանաւանդ Անգլիայի տմարդի քաղաքականութեան։ „Թիւրքիոյ ամբողջութիւնը“ պահպանելով — թէկուզ հէնց ցարիզմի արշաւանքի դէմ — նրանք գործեցին մի հսկայական ոճիր ընդդէմ մարդկայնութեան։ Հայ-կրէտական-մակեդոնական հարցերը առկախ մնացին. արևելեան ողբերգութիւնը յարատևեց, նուիրելով 19-րդ դարու պատմութեանը մարդկային անլուր չարչարանքների սրտաճմլիկ, աղեխարշ էջեր...

(Շարունակելի)

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՊՐՕ ԱՐՄԷՆԻԱ“

(№. №. 13, 14, 15, 16)

—

Այս համարներում զետեղուած են բազմաթիւ թղթակցութիւններ Տաճկահայաստանից և յօդուածներ՝ իմիջի այլոց՝ Անատոլ Ֆրանսի, Քիառի, Կոնտանսօնի և Դօրիսի։ Ահա Անատոլ Ֆրանսի մի յօդուածը ամբողջութեամբ.

„ՀԱՑԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ“։—„Բոլոր նրանք, որոնք ինձ պէս հիւրասիրուել են հայ գաղութներից Եգիպտոսում ու Ֆրանսիայում, պահում են իրենց սրտի մէջ խոր հիացում և ջերմ համակրանք դէպի այդ հայրենազուրկ, աշխոյժ ժողովուրդը, որ ենթակայ է բնաջնջման։ Բոլոր հայերը, ինչ կենցաղ էլ ունենան նրանք օտարութեան մէջ, անձկութեամբ են դիտում մահուան սպառնալիքների տակ գտնուող իրենց եղբայրակիցների վիճակը։ Նրանք գիտեն, որ սուլթանը մեթոդիկ կերպով իկատար է ածում քաղաքական մի ծրագիր, որի նպատակն է ոչնչացնել բովանդակ հայ ցեղը, և նրանք ընդունակ են մեծ ջանքերի ու զոհողութիւնների, որպէսզի կարողանան փրկել այն, ինչ որ հնարաւոր է դեռ փրկել։

„Սուլթանի ծրագիրներն խանգարելու ամենալաւ միջոցն է՝ հրատարակել ի գիտութիւն աշխարհի՝ կոտորածի ամեն մի փորձ, հէնց որ երևան են գալիս նրա առաջին նշանները։ Այդ բանում մենք կարող ենք օգնել հայերին։ Մենք կարող ենք ձայն բարձրացնել բազմաթիւ լրագիրների շահագրգռուած լռութեան մէջ։ Կոտորածները անկարելի կը դառնան, հէնց որ յայտնուեն աշխարհին։ Կառավարութիւնները թողին, որ կոտորեն. „Մենք տեղեկութիւն չունէինք“, ասում էին նրանք։ Պէտք է, որ սրանից յետոյ կառավարութիւնները իմանան և յայտնի լինի, որ նրանք գիտեն։

„Մի բան, որ ամբողջ աշխարհի հայ գաղթականութիւններին հարկաւոր է—դա միութիւնն է։ Բաւական չէ, որ նրանք արթուն լինեն։ Պէտք է, որ նրանց արթնութիւնը միասին գործադրի։

„Նրանք պէտք է մի միտք և մի հոգի միայն ունենան։ Նրանք պէտք է իրար հետ միասին լինեն սպառնալիքների ենթակայ եղբայրների պաշտպանութեան համար։ Այս պայմանով միայն նրանց գործունէութիւնը իրական կը լինի, որովհետև համաշխարհային կը լինի։ Նրանց դատը համամարդկային դատ է. պէտք է, որ նրանք շահագրգռեն ամբողջ մարդկութիւնը։

„Եւրոպայի և աշխարհի ուշադրութիւնը գրաւելու համար պէտք է, որ բոլոր հայերի ձայները միանան մէկ ձայնի մէջ։ Նրանց փրկութեան միակ պայմանը միաբան գործունէութիւնն է“։

ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍ

—

Կոնտանսօն՝ „Քրիստոնեաներ և Մահմէդականներ“ գրքի հեղինակը՝ գրում է „Պրօ Արմէնիայի“ խմբագրութեան.

. . . „Այն դատը, որի համար մարտնչում էք դուք, վաղուց գրաւել է իմ համակրանքը. . . Հայերը մի ազգ են, որի ահագին մեծամասնութիւնը կազմում են երկրագործներ. . . Լեռների կատարներին թառած իրենց գիւղերի շուրջը՝ նրանք անցնում են իրենց ժամանակը, արօրն ու բրիչը շարժելով և իրենց հօտերն արածեցնելով... Ինչպէս բոլոր լեռնաբնակ խաշնարած կամ հողագործ ժողովուրդները, հայերը ևս ունեն զինուորական արժանաւորութիւններ, որոնք հնարաւորութիւն են տալիս մէկ ազգի՝ պաշտպանել իր անկախութիւնը։

„Հարկաւոր է շեշտել այս կէտի վրայ ոչ թէ միայն այն պատճառով, որ նա երևան է հանում մի կարևոր ճշմարտութիւն, այլ որովհետև նա պիտի ոչնչացնէ հայ „սարրաֆի“ մասին տարածուած առասպելը։ Դա չի խանգարում սակայն պնդել, որ հայ ցեղը ունի հրաշալի ունակութիւններ առևտրի ու գործառնութիւնների մէջ, երբ դէպքը ներկայանում է. բայց այդ յատկութիւնները նա բաժանում է աշխարհիս ուրիշ մեծ ազգութիւնների հետ“։

—

„Աբդիւլ Համիդի ներքին կեանքը“ գրքի հեղինակ Ֆ. Դօրիսը՝ օրինակ վերցնելով տաճկական „Սէրվէթ“ լրագիրը և նկարագրելով նրա խմբագիր Թահիր-բէյի վերին աստիճանի կեղտոտ անցեալը ու ներկայ սրիկայական սխրագործութիւնները, բնորոշում է՝ թէ որքան ընկած է տաճկական մամուլը.

„Սուլթան Համիդի թագաւորութեան ամենաբնորոշ ախտանիշներից մէկն է անշուշտ աւազակների և եղեռնագործների այն մեծ բազմազանութիւնը, որն առաջ եկաւ նրա ռէժիմի տակ.—օրինազանց նախարարներ, մարդասպան կառավարիչներ, կոտորող զինուորներ, պաշտօնական և անպաշտօն լրտեսներ, գողաւազակների մի ամբողջ աշխարհ, որոնցով սուլթանը շրջապատուած է իր քանդումի գործը յաջողեցնելու համար։

„Եըլդըզի և նրանից կախում ունեցող դպանանոցների ընտանի գազանների մէջ պէտք առանձին տեղ տալ մի տեսակ լրտես օրագրողներին և շանտաժիստներին, որոնք Թիւրքիայի խոցերից մէկն են“։

—

Պիէռ Քիառ. „Ոչ միայն Բիթլիսի ու Էրզրումի սահմաններում, այլև ամէն տեղ, մասնաւորապէս Մուշի և Բայազէդի շրջակայքում, վերսկսել են սիստեմատիկ սպանութիւնները. . .

„Իրենց քրիստոնեայ և քաղաքակիրթ անուանող Եւրոպայի ներկայացուցիչները համբերում ու քաջալերում են արքայ մարդասպանին. նրանց անմիջական պարտականութիւնն է՝ դունչը կապել ու խողխողել Կարմիր Գազանին։ Եթէ նրանք յապաղեն, վախենալու է, որ մասնաւոր նախաձեռնութիւնը փոխարինէ նրանց դիտաւորեալ անկարողութեանը. բայց այն ժամանակ թերևս վնասուեն եւրոպական շահերը և զոհուեն եւրոպացիների կեանքեր՝ եթէ վճռուի հարուածել այդքան ոճիրների հեղինակին“։

* * *

Մեր ընկերները Բերլինից մեզ հաղորդում են հետևեալ ուրախալի փաստը.

„Յունիսի 15-ին և յուլիսի 11-ին տեղի ունեցած ռուս ուսանողների երկու ժողովում, որոնց ներկայ էին 40-50 հոգի, երկու հայեր համառօտ զեկուցումներ կարդացին հայոց հարցի մասին, նպատակ ունենալով ծանօթացնել ռուս ընկերներին Թիւրքահայերի քաղաքական վիճակի և մեր շարժման գլխաւոր մօմենտների հետ։

Ժողովականներին բաժանուեցին „Դրօշակի“ տասնամեակի համարները և զանազան քաղուածքներ „Դրօշակից“ ու „Պրօ Արմէնիայից“՝ ռուսերէն լեզուով։ Ժողովականների առաջարկութեամբ՝ նոյնիսկ մի փոքրիկ հանգանակութիւն եղաւ յօգուտ „Դաշնակցութեան“ տեղական կոմիտէի։ Առաջին ժողովում առաջարկուեց հետեւեալ բանաձևը.

„Բելգիայի ռուս ուսանողների ժողովը՝ կայացած 1901 թ. յունիսի 15-ին, լսելով հայկական շարժման վերաբերեալ մի զեկուցում, յայտնում է իր ջերմ համակրութիւնները մարտնչող հայ եղբայրներին և յոյս՝ որ նրանց հերոսական կռիւը հայ ժողովրդի քաղաքական և սոցիալական ազատութեան համար՝ կը պսակւի կատարեալ և շտապ յաջողութեամբ“։

„Այդ բանաձևը ընդունուեց բուռն ծափահարութիւններով“։

Ռուս երիտասարդների այս համակրանքը, որ սիրով արձանագրում ենք, անկասկած շատ թանկ է մեզ համար։

ԹԵՐԹՕՆ

ԴԱՐԲՆԻ ԵՐԳԸ

—

„Արի՛ փշրում ես քո խոփը, տանք դարբինին կռելու,
Կռենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կուելու։
Ողբա՛յր հայեր, առէ՛ք խոփը, տուէք դարբինին կռելու,
Կռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու“։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

I

— Դէ՛հ, ելէ՛ք, որդի՛ք։ Աստղը լուսաբեր
Վաղուց է սահում խաւար երկնքում,
Նրա կաթնածիր, պլպլան շողեր
Վաղուց մայր լուսոյ ուղին են հարթում։
Խաւարն է դողում, քունը սարսռում,
Վառ արշալոյսի գունատ կարապետ՝
Սիրուն աստղիկը լոյսն է աւետում,
Զարն իր սարսափով կորչում է անհետ։
Դէ՛հ, ելէ՛ք, որդի՛ք։ Հա՛ արևելքի
Մռայլ հոգեմաշ քօղը պատռուեց,
Լուսոյ ցնցուղից անհուն երկնքի
Խաւար կամարը մեղմիւ գունատուեց։
Աղօթարանից հովը գրկաբաց
Ողջոյն է բերում մնջած դաշտերին,
Եւ ծաղիկները՝ խաւարից յոգնած՝
Նայում են լուսոյ անդրանիկ շողին։
Նրանց թերթիկներ իրար ականջում
Մեղմ փսփսում են երգը վաղորդեան
Եւ եթերային զեփիւռի գրկում
Վայելում սիրոյ օրօր հեշտութեան։
Դէ՛հ, ելէ՛ք, որդի՛ք։ Հովիւն էլ հնչեց
Լացող սրնգի երգը ոլորուն,
Այրում մակաղած հօտն էլ շարժւեց,
Դիմում է դէպի դաշտերը սիրուն։
Երէկ երեկոյ, ուշ վերջալուսին,
Մեր միահամուռ մուրճերի ձայնով
Հրաժեշտ տւինք ծածկւող արևին.
Ելէ՛ք, ողջունենք նրան նոյն ձևով։
Սերո՛ր, քեզ մատաղ, դէ՛հ վեր կա՛ց շուտով.
Զէ՞ դու աւագն ես, ողջ քեզ են նայում.
Այդպէս է ամէն ինչ ընթանում կարգով —
Մեծերի յետևից փոքրերն են քայլում։
Նայի՛ր աստղերի սիրուն խմբերին.
Որը բոցավառ է՝ իր յետևում
Քաշում է մի շարք ուրիշ փոքրերին,
Ամէնքը միասին գնում են գնում...
Արարչութիւնն իր իմաստութիւնով
Չափ է սահմանել մեծին ու փոքրին,
Յաւիտենական իր օրէնքներով
Պարտք ու իրաւունք բաշխել ամէնքին։
Հսկայի ուժին համահաւասար
Նրա կրծքի տակ մի սիրտ է դրել,
Եւ այդ վեհ սրտին վայել ու յարմար
Նրան Սուրբ Գործի ասպարէզ տւել։
Չափը վերից է, լոկ գործն է վարում.
Ով որ շատ ունի, նա շատ է տալի,
Ներդաշնակութիւնն անխախտ է մնում,
Եւ կեանքը դառնում է քաղցր, բերկրալի։
Ձեր մեծ եղբայրն արդէն վերկացաւ,
Պետո, Գուրգէնիկ, Վազգէն ու Բարկէն,
Դէ՛հ, դուք էլ ելէ՛ք, հաւը խօսեցաւ,
Սար ու ձոր թնդաց թռչնոց ձայներէն։
Մեղմ զօղանջում է ձայնը կոչնակի
Կիսաքուն դժբախտ աշխարհի համար,
Ինչպէս գթառատ, վշտացած ոգի,
Որ սուգ է ասում խեղճերին անճար։
Այն — ազատ ոգու աղօթքն է անբիծ՝
Նման բուրմունքին ցօղապատ ծաղկի,
Որ վեր է ձգւում տառապող երկրից՝
Բաղխելու դուռը փակւած երկնքի։
Ելէ՛ք, սրբազան այդ մրմունջներին
Խառնենք մեր աղօթք, մեր յոյս ու խնդում.
Թո՛ղ երկինքն ուժ տայ մեր բազուկներին,
Ցաւն ու հառաչանք մեղմի աշխարհում։
Ահա ամէնքդ էլ արդէն պատրաստ էք.
Օրհնեա՛լ լինիք դուք, հնազանդ որդի՛ք...
Դէ՛հ, գնա՛նք այժմ մեր գործն սկսենք,
Ձեռք առնենք երկաթ, պողվատ ու գործիք։
Թո՛ղ արշալոյսի առաջին շողեր
Մեր վառ հնոցի կայծերը տեսնեն,
Թո՛ղ որ մեր մուրճի ուժգին հարւածներ
Սրբազան Գործի գալուստն աւետեն։

II

Ողջո՛յն ձեզ, ողջո՛յն, կարծրակուռ մուրճեր.
Մետաղից կռւած՝ մետաղն էք կրծում...
Հուժկու ձեր թափի հուժկու հարւածներ
Բարին և չարն են ծնում աշխարհում։
Ո՜հ, ինչքա՜ն յաճախ մարդկային ձեռքում
Դուք, անգիտակից, անարդ բռնութեան,
Արեան, արցունքի գործիք էք դառնում,
Մեղսակից լինում անարդարութեան։
Կարծր մետաղը ձեր հարւածներով
Դառնում է ահեղ զէնք բռնակալին,
Աշխարհն է լցնում հեծեծանքներով,
Բողոքը խեղդում խեղճի շրթունքին։
Ո՞ր չար Աստուածը բախտը մարդկային
Ցաւի ու արեան, լացի հետ կապեց.

Ինչո՞ւ արօրին, փոցխին, մանգաղին
Սուրն ու նիզակը նա ընկեր տւեց...
Անգէտ ու անփոյթ աշխարհի բախտին,
Անհուն դարերից ծեծում էք ծեծում,
Ձև ու ուժ տալիս երկաթ-պողվատին,
Ազատ, անազատ կեանքեր սահմանում։
Դժբախտ ստրկի բազուկի շղթան
Դուք էք շաղկապում օղակ-օղակից,
Եւ ազատ մտքի բանտերի փական
Դուք էք եռանդով կռում պողվատից։
Էլ հէրիք, մո՛ւրճեր... Ձեր հզօր թափից
Թող այսուհետև հառաչի չարիք.
Շղթան՝ թօթափած ստրկի ձեռքից,
Փշրենք ու կռենք պայքարի գործիք։
Շղթայ չենք կռի և ո՛չ մի ձեռքի —
Անազատ կեանքով շատ տառապեցինք.
Կապանք չենք շինի և ո՛չ մի մտքի —
Կաշկանդւած մտքից շատ ցաւ կրեցինք։
Խաղաղ վաստակի, սուրբ աշխատանքի
Մենք պիտք կռենք փայլուն գործիքներ.
Խաղաղ վայելքի, արդար քրտինքի
Մենք պիտի նւիրենք բոլոր մեր ջանքեր։
Բայց այնտեղ, ուր որ բռնութեան ձեռքից
Հեծում է մարդը հազար ցաւերով —
Այնտեղ լոկ սուսեր քաշենք պողվատից,
Լոկ արեան գործիք կռենք մուրճերով...

III

Քեզ ևս ողջո՛յն, հնո՛ց բոցավառ,
Որ քո բարկ ծոցում քնքոյշ խնամքով
Դուստրը երկնքի՝ լուսաւոր պայծառ
Հուրը կենսատու՝ կրում ես սիրով։
Երկնքից խլւած կայծն աստուածային
Անհուն խաւարի քօղը պատառեց,
Լոյս և ջերմութիւն տւեց աշխարհին
Եւ ճշմարտութեան նա ուղին հարթեց։
Ի՞նչ փոյթ՝ թէ ժայռին դամւած մարդկութիւն
Արծւի կտցով պատառւած կրծքով
Քինոտ երկնքից հայցէր թողութիւն
Եւ լոյսը գնէր անլուր տանջանքով։
Մոխրում թաղւած մի հատիկ կայծից
Հրդեհն է ծնում ահեղ բոցերով,
Եւ ճշմարտութեան մի հատիկ շողից
Բիւր սիրտ է վառւում սրբազան յոյզով։
Ցոգնած դարերի մռայլ շարքերում
Կան բոցապսակ փայլուն տարիներ,
Յոգնած մարդկութեան մռայլ անցեալում
Կան բոցով վառւած վսեմ հոգիներ։
Նւիրակա՛ն հուր... Քո կիզիչ շնչով
Եւ մոխիր հագած սեաւոր սրտեր
Մեղմ փոթորւում են դառն կսկիծով,
Եւ այրւում, մխում տանջւած հոգիներ։
Դո՛ւ ես փոթորկում ըմբոստ հոգիներ
Վսեմ պայքարի ահեղ ժամերին.
Դու ես խարանում անարգ ճակատներ
Վատ դաւաճանին ու չարագործին։
Իսկ երբ խաւարը շատ է ծանրանում
Թշւառ մարդկութեան ցաւագար գլխին,
Երբ չարիքի տակ հեծող աշխարհում
Անէծք է լսւում անգութ երկնքին.
Երբ որ բռնութեան բիրտ կապանքներում
Տառապանքներից խամրած շրթունքներ
Էլ չեն մրմունջով սև բախտը ողբում
Եւ դահիճների չեն լիզում ոտքեր, —
Ա՛հ, այն ժամանակ անարգ բռնութեան
Նշաւակ դարձած ստրուկ բազուկներ
Յուսահատ թափով ցնցում են շղթան,
Կաշկանդւած ձեռքի փշրում կապանքներ...
Եւ շղթաների հզօր ցնցումից
Թռչում են մէկէն կայծեր անհամար,
Ինչպէս կայծակներ ծնած ամպերից՝
Դարերից իշխող պատռում են խաւար։
Եւ Ազատութեան Սրբազան Ոգին,
Ինչպէս փայլակը սև հորիզոնով,
Բոցէ պսակը յաղթական ճակտին՝
Անցնում է հպարտ, փրկարար թափով։
Նրա ճաճանչից փայլ են ստանում
Հազար ու հազար խաւարած աչքեր,
Նրա ջերմութեամբ յոյզ են ստանում
Հազար ու հազար թուլացած սրտեր։
Կոյր զօրութեան մէջ համր տարերքի
Չարիքն ու բարին ընկեր են դարձած։
Ազատ շանթերից ամպոտ երկնքի
Աւերիչ, ինչպէս վիշապ կատաղած,
Հնդեհն է իջնում խուլ մռմռոցով,
Տուն, բնակութիւն գերեզման շինում
Եւ մոխիրների տխուր կոյտերով
Կեանք, երջանկութիւն յաւիտեան թաղում։
Եւ երբ երկրի մռայլ արգանդում
Հուրը կրծում է անգունդի պատւար —
Ինչպէս զայրոյթը մարդկային սրտում
Մի ելք է փնտրում դէպի լոյս աշխարհ —
Բոցերով յղի լեռները հսկայ,
Ասես՝ մի ահեղ երկունքով բռնւած,
Հեծում են ցաւից աշխարհի վրայ,
Թանձւած արգանդից վիժում աւերած.
Իրանց կատարի մռայլ բացւածքից
Ծուխ ու բոց որձկում և քարեր ժայթքում,
Գիւղ ու քաղաքներ շինւած դարերից
Ահաւոր թափով աւերակ դարձնում։
Բայց և նոյն հուրը ազնիւ սրտերում
Վեհ Ազատութեան գործօն է հպօր...
Դէ՛հ, թո՛ղ մեր խաղաղ այս գործանոցում
Նա և՛ մեր ջանքը պսակի այսօր։

IV

Նայեցէ՛ք, որդիք, այս ծեր զնդանին։
Հինաւուրց ժանգը պատել է նրան,
Ինչպէս ամօթը ստրկի ճակտին,
Ինչպէս մութ ամպը կատարին լերան։
Խեղճ հայրենիքի դժբախտ օրերում
Սա է ծառայել գործիք չարութեան,
Արեան արցունքի սև տարիներում
Այստեղ են ծեծել զէնքեր բռնութեան։
Մեր խեղճ պապերը քանի՞ տարիներ
Իրանց ձեռներին կռել են շղթայ,
Եւ նրանց աչքից քամւած արցունքներ
Սև ժանգ են կտրել զնդանի վրայ։
Նոր է մեր կեանքը, նո՛ր ձուլենք զնդան...
Ձուլենք մենք նրան ողջ կուռ պողվատից,

Հաստաբեստ, փայլուն, ամուր, անսասան,
Թող որ չտնքայ նա մեր հարուածից։
Մեր նոր զնդանը ձուլելու համար
Ահա բերում եմ զուտ, կարծր պողվատ։
Շուրջ բոլորեցէք. էլ չ'առնենք դադար.
Զարկեցէք թափով, հուժկու, անվհատ։
Սերո՛ր, դու այստեղ կանգնիր, կենտրօնում,—
Ամէնից ծանր մուրճը քեզ բաժին.
Եւ միւսներդ — երկու կողմերում,
Ամէնքիդ ուշքը դարձած զնդանին։
Զարկեցէ՛ք, որդիք... Վառման հնոցում
Պողվատի շերտերն իսպառ փափկել են։
Տեսէք հա՛, ամէնքն իրար են ձուլւում.
Զուր չէ որ երկաթը տաք-տաք կը ծեծեն։
Զարկեցէ՛ք, որդիք... Թող հիմքն ամրանայ,
Թանձր կոճղի մէջ նա է տեղ բռնում։
Ամուր հիմքով շէնքն ամուր կը մնայ,
Ինչ որ հիմք չունի, շատ վաղ է ընկնում.
Ծպտում է ժայռը հզօր մրրկին,
Երբ որ իր հիմքը անդունդն է մխած.
Քամի, փոթորիկ հեգնում է կաղնին,
Երբ հաստ արմատը խորունկ է թաղուած։
Զարկեցէ՛ք, որդի՛ք, զարկեցէ՛ք հիմքին.
Թանձր կոճղի մէջ նա պիտի մնայ։
Թէ մեր հայրերն էլ հիմքով գործէին,
Այսքան սև օրեր չէինք ունենայ։
Հիմքը պատրաստ է, յետ տանենք հնոց.
Թող որ նա այնտեղ շիկանայ նորից։
Իսկ դուք բերէ՛ք ինձ ունելիք, կռոց,
Մի նոր շերտ կտրենք կարծր պողվատից։
Փռենք պողվատը զնդանի վրայ,
Թող որ երեսը հաստաբեստ լինի.
Հնոցում պահենք հալւի ու եռայ,
Որ մուրճերի տակ հեշտութեամբ ձուլւի։
Զարկեցէ՛ք, որդիք, ահա զնդանը.
Այժմ երեսին իջէ՛ք հարուածներ.
Իրար թող ձուլւեն նորը և հինը,
Թող զանգւած կազմեն պողվատի շերտեր։
Ինչպէս որ շէնքի գլխին է ճայթում
Ահեղ փոթորիկ, կայծակ ու շանթեր,
Այնպէս էլ զնդանի գլխին են իջնում
Անողոք մուրճի հուժկու հարուածներ։
Զարկեցէ՛ք, որդիք, գլուխն ամրանայ,
Ինչպէս սաղաւարդ զինւորի գլխին.
Հարուածի առաջ թող ըմբոստ մնայ,
Ինչպէս սև ժայռը փոթորկի ժամին։
Զարկեցէ՛ք այժմ զնդանի կրծքին,
Պողվատի շերտը թող պատի նրան.
Ինչպէս կուռ զրահ ընդդէմ նետերին.
Թող նա պինդ գրկի մեր այս նոր զնդան։
Օրհնեա՛լ լինիք դուք, կտրիչ իմ որդիք.
Ահա զնդանը պատրաստ է իսպառ,
Ազնիւ ձեռների ազնիւ արգասիք,
Նա մեր Մեծ Գործին կը լինի սատար։
Եւ այսուհետև պէսպէս գործիքներ
Կռենք ու կոփենք անդուլ, անդադար,
Դուշմանը դողա՛, հոգա՛նք մեր ցաւեր,
Թող սա Սուրբ Գործին լինի միշտ սատար։
Արևը կախուեց լեռների մէջքին,
Հօտերը սարից խաղացին դէպ ձոր,
Մառախուղն իջաւ, իջաւ գաշտերին,
Հօտաղ ու նախիր յետ եկան բոլոր։
Ցած դրէ՛ք ուսից դուք էլ ձեր մուրճեր,
Ժամն է հանգստեան նաև մեզ համար.
Վար առէ՛ք, որդի՛ք, կաշէ գոգնոցներ,
Խաւարն է գալիս պատելու աշխարհ։

(Շարունակելի)

ՂԱՐԻԻ

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Թ. ք.-ից Հ. Ա.-ի միջոցով 1000 ֆրանք, տիկ. Ա.-ից 50, Զոկ ուսանողից 27, օր Ղ.-ից 100։ Գումար 1177 ֆրանք։

ՎՐԷԺԻ կեդր. Կոմիտէն՝

Մի ներկայացումից 500 ղրան, ՆՈՐ ԳԻՒՂԻՑ՝ Ց. Տ. Կ. Ց.-ի միջոցով 75, ՇԱՀՐՈՒԹԻՑ՝ Շահէնի միջոցով 250, ՎՐԷԺԻ „Միկրոր" խ. 96, ՆՈՐ ՁՈՒՂԱՑԻՑ՝ Ց. Տ. Կ. Ց.-ի միջոցով 420. վերջին գումարի նուիրատուներն են՝ Զօզան 40, Գագիկ, Բայրամ, Ֆ, Խելքոց, Ղարաքաղցի ոմն, Ոյժ, Ազատութիւն 30-ական, Ասլան 25, Հուր 20, Սիրտ 20, Համակրող, Լ. Մ. Խ., Ա., Գան 10-ական, Փիրաթամ, Սէր, Ոմն 15-ական, Կայծեր, Համակրող ոմն, Վրէժ 5-ական, Ոյն 4, Պ. 1։ Ամբողջ գումարն է 1341 ղրան։

ՆԱՒԱՀԱՆԳՍՏԻ կեդր. Կոմիտէն՝

„Ղարիբ" խ. 1900 թ. ԾՄԱԿ գիւղից 29 ռուբլի 50 կօպէկ, Քար-պօղազից 22 ռ. 40 կ., Քէփէ փողար 9 ռ. 40 կ., Հրացանի փող 15 ռուբլի։ ԴԱՂԹԱՂԱՑԻՑ ՁԱՓՈՒՂ գիւղից Մ. Մել. 15 ռուբլի, Ց. Մար. 10, 2 դրացիներ 10, Դ. Թոր., Ծ. Միք., Ա. Միք, Ք. Մել., Դ. Բալ., Ղ. Զօլ., Պ. Թոր., Դ. Ա., Բ. Մար., Մ. Խօճ., Ն. Փէր 5-ական, Պ. Բալ. 4, Ա. Մ., Ց. Դաս., Թ. Միք., Ա. Օքս., Ս. Մել., Խ. Թոր., Ն. Զօլ. 3-ական, Ն. Թոր., Ց. Միք., Ց. Մել., Ա. Բալ., Մ. Թոր., Ա. Թոր., Ա. Դաո., Ց. Հուպ. 2-ական, Դ. Եղ., ..., Պ. Մար., Պ. Խ., Հ. Դալ., Թ. Դալ., Պ. Արզ., Մ. Խօճ., Դ. Ն., Գ. Ներ., Ն. Թ. ճին., Ա. ճին., Ա. ճին մէկ-մէկական։ ԼԱՍՏԷՆԻ գիւղից՝ Մ. Թօփ. 10 ռուբլի, Ս. Թօփ. 5, Ս. Մար. 4, Ս. Սեր., Ա. Մար., Ս. Մար., Հ. Սար., Մ. Քաֆ., Պ. Սար., Ց. Մար. 3-ական, Զ. Պահ., Ս. Փալ., Պ. Թոփ., Բ. Մին., Ց. Թօփ. 2-ական, Ց. Մար., Ց. Լուս., Ց. Շէկ., Պ. Թօփ., Մ. Ս., Ա. Մար. մէկ-մէկական։ Ընդհանուր գումար 332 ռ. 30 կօպէկ։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ կեդր. Կոմիտէն՝

Մարուֆ 20 ղուրուշ, Թաթուլ եւ ընկերներ 20, Պաղօ 15 եւս 80, Զօլօ 40, Հակայ 20, Վարդան 20, Զօլօ 20, Նազենիկ 5 եւս 12. 30, Պաղօ 20, Նազենիկի հայր 20, Զգայնիկ 42, „Թաթուլ" խ. 55, „Վրէժ" խ. 10, Կամաւոր 50, „Զոհ" խ. 20, „Թաթուլ" խ. 47, Ծովափի խումբէն 45 եւս 30, Նազենիկ եւ ընկերներ 8, ԶԻՆԱՍԷՐ գիւղի խումբէն 20 եւս 80, „Զոհ" խ. 62, „Թաթուլ" խ. 143. 20, Ապուքաթ 4. 20, „Թաթուլ" խ. 35, „Վրէժ" խ. 26, „Արծրունի" խ. 35, „Ցառաջ" խ. 25, Զօլօ 44։ ՏԱՌԵԽ քաղաքի „Վտակ" խումբէն 103 ղրշ.։ ՍԱՆՈՑ ՁՈՐԷՆ 100։ Համագումար 1277 ղրշ. 30 փարայ։

ԼՕՐԷՆՍԻ կոմիտէի հանգանակած նուիրատուներու ցանկը՝ Մորուք 2. 15 ղօլար, Ուստուրա 2, Գուրգէն 2, Երեք համակիր 3, Մին. Խաչխաթունեան 1. 50, Քանդիշ 1. 50, Համակիր մը 1. 50, Ց. Թ., ՄՄ. ԳԳ., Դ. Թ., Զալի, Զուլում, Կայծակ, Սեւ, Դամուր, Կ. Ց. Գ., Փէրհատ — մէկ-մէկ-ական, Փիսոն. Ե., Խաչօ, Տուն մը, Կ. Ա., Խաչգոմ, Մամ, Բառարթիմայ, Սաղր, Հրանտ, Թոփ, Ս. Ս. 50-ական սէնթ, Մ. Գ. 25 ս., Հուր 25 ս., Սուր 15 ս., Տուն մը 50 ս.։ Գումար 30 ղօլար 50 սէնթ։

ՍՈՒԼԻՆԱՑԻ „Նոր-դար" խ. (ապրիլ, մայիս եւ յունիս)՝ Համազասպ 13 ֆրանք, Տիգրան 6, Պարթեւ 2, Խոսրով 2, Վրդանէս, Գուրգէն, Հրանտ, Վահրիշ, Միսակ, Վահրամ, Սիսակ, Մինրան, Աշոտ, Պետրոս 3-ական։ Գումար 53 ֆրանք։

Խմբագրութեան դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du „Droschak", Genève (Suisse)